



ԶՈՒՅՈՒՆ

1971
ս

Ամ146



Ի Հ
ՏԱՐԻ


ԵՇՈՒԱԾԻ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅՑ
Ս. ԵՇՄԻԱԾԻ

Յանուար

1971




Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ւ

Տ. Տ. Վ Ո Զ Գ Ե Խ Ի Ա Բ Ա Զ Կ Ա Յ Ց

ԳԵՂԱՓԱԼԻ ԵՐ ՍՐԲՈՉՆԱՊՈՅԻՆ ԴԱԹՈՂՈՎՈՅԻ

Ա.ՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ
ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՍԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ
ՄԱՅՐ ՏԱԺԱՐՈՒՄ**

(1971 թ. հունվարի 6)

**Յանուն Հօր և Որդու և Հոգուն Սրբոյ, ա-
մեն:**

Սիրեցիալ հավատացյալ ժողովուրդ մեր
որ ի Հայաստան և որ ի սփյուռք աշխարհի:

Տիրոջ ողորմությամբ, կանգնած ահա նոր
տարվո շնմին, մեր լուս հավատքի խորան
սուրբ Էջմիածնեն, ձեզի բոլորին կրերենք
ավետիսը երկնքի Բրեշտակներու՝

«Փառք ի բարձուն Աստուծոյ, և յերկիր
խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Աստված, խաղաղություն, բարի կամեցո-
դություն:

Ահավասիկ երեք մեծ գաղափարներ, ո-
րոնք կրովանդակեն ամբողջ խորհուրդը
սուրբ Ծննդյան: Եվ կիորհինք սխալած չը-
լալ, ապա գաղափարներու իմաստավորումը
տեսնելով սուրբ Երրորդության մեր դավա-
նության մեջ, քանի որ Փրկիչը մեր Քրիս-
տոս կիավանենք իբրև «Խշան խաղաղու-
թեան» և սուրբ Հոգին՝ իբրև Աստուծո բարի
կամքը որ կներգործէ մարդկային աշխար-
հին մեջ:

Այս սուրբ ժամին, Մեր աղոյքն է որ հա-
յախնամողն Աստված ավելի լուս և ավելի
հոգին զորություն շնորհն իր արարածներուն
բոյոր, որպեսզի անոնք առավել վճիռ հաս-
կրնան իր բարի կամքը ու առավել վճուա-

կանորեն ի կատար ածեն զայն իրենց կյան-
քին մեջ, երկրի վրա:

Խաղաղության և ի մարդիկ հաճուրյան
աստվածային պատգամի ավետումեն, ահա
երկու հազար տարիներ հետո, մարդոց աշ-
խարհին մեջ տակավին կան պատերազմ-
ներ, կան անարդարություններ, կան ազգա-
միջան թշնամություններ, կան ցեղային
խարություններ, կան հաղածանքներ ու ա-
զան շահագործումներ, կան ոչ բարի կամե-
ցության բազում ճգոտումներ ու գործեր
մարդկային, ընկերային և միջազգային
կյանքին մեջ:

Այս ողբերգական կացությունը, մենք՝
քրիստոնյաներս, կմերժենք ընդունիլ որպես
ճակատագիր: Մենք կիավատանք Աստուծո
արարագործ զորության և Անոր նովճան
արարագործ բարի կամքին, որմես ճառա-
գայք մը կշողա մարդուն հոգիին մեջ, իբրև
շնորհ փրկարար ու ատեղծարար: Այդ ճառա-
գայթով, այդ լուսով է որ մարդկությունը ամ-
րող իր պատմության ընթացքին ոգեշրնչ-
ված է Եջմարիտին, բարիին ու գեղեցիկին
տեսիլքով, ու նաև սրբանալու, անմահանա-
լու հույսով, և հերոսական անդուզ պայքար
ժողով է հանուն այդ իդեալներու կենսագործ-
ման: Եջմարիտ է թե այդ հերոսական պայ-
քարին մեջ, հաճախ ավելի զորավոր հանդի-

սացած են եսակեդրոն բնագդները, քան իդեալին ձգտող տենչերը, սակայն այնուամենավիվ, անոնք, այդ տենչերը երբեք չեն շրացած մարդու սրտեն: Տերը երբեք չէ լրած իր արարածները: Խավար ու դաժան ժամանակներու մեջ, իդեալին ձգտող տեսիլքները միշտ առաջնորդած են մարդոց մանավանդ ընտրյալներուն, և ցուց տված ուղիղ ճանապարհը, և օգնած ննոնց որ անճահանջ պայքարը շարունակեն՝ բարձրանալու համար վեր, միշտ ավելի վեր մարմնի և նյութի պայմանեն:

Պատմությունը ամբողջ պատմությունն է ոգեկան, իմացական ուժերու բացահայտման և զարգացման: Մարդկային բաղաքակրության ու բարոյական զարգացման պատմական մրրկալի ընթացքը, դյուցազներգությունը մըն է որուն մեն մի հնչունը ծնունդ է առած անցյալ սերունդներու սրտերու տրոփիուննեն, իդեալական բարիքները, արժեքները ստեղծելու անոնց հզոր մղուննեն:

Մեզի, հակերուս համար ալ փառքի անկործների տիտղոս մըն է այն իրողությունը որ մեր ազգի և սուրբ եկեղեցիի բազմադարյան պատմությունը, վավերական դյուցազներգությունը մը կհանդիսանա՞ հանուն Քրիստոսի Սվետարածին, հանուն արդարության և պատության, Հայոց աշխարհին մեջ լիությամբ կենացործունովը՝ ճշմարտին, բարիին ու գեղեցիկին:

Հետևաբար, մարդկի Արարծին ամենահարզացած գործակիցները կդառնան, իրենց անհատական ու ընկերային կյանքին մեջ ազատ ճանապարհ տալով Անոր բարի կամքի ճառագայթին, Սվետարածի լուսին, որով կլուսավորվի իրենց հողեղեն բնությունը, կողեղինանան խավար ու անձն ուժերը նյութեղեն մարմնույն, իմաստ ու բարոյական վերտրյուն կատանան մարդկային կյանքն ու պատմությունը: Մեր բոլորի իդան է, և սպասումք մարդկային բազմություններու, որ այս ուժերը և պատմությունը վերջապես մտնեն հավասարակշիռ ու ներդաշնակ զարգացման հունի մեջ, բայց ննոնց նորապես հնչեցնեն պատզամը երկնքին, պատզամը խաղաղության, պատզամը բարի կամեցողության:

Մեր մաղթանքն ու սպասումն է մանավանդ որ Տերը իր փրկարար օգնականությունը հասցեն իր իսկ հիմնած ու զիխավորած եկեղեցիին, անոր խորհրդավոր մարմինը կազմող բոլոր քրիստոնեական եկեղեցներուն և անոնց սպասավորներուն, որպեսզի մեր օրերու աշխարհին մեջ անոնք նորապես հնչեցնեն պատզամը երկնքին, պատզամը խաղաղության, պատզամը բարի կամեցողության:

Քրիստոնայի համար չկա ավելի նվիրական առարկություն: Մեր ըմբռնունով հնա-

րավոր չէ այց կերպ հասկնալ և կանքի կոչել Քրիստոսի Սվետարածնը, ապօր, եթե մարդկությունը համայն, կանգնած է աշխարհակործան հրդեհումներու ահարկու փանցին առցւ: Ամեն պատերազմ մխտումն է Քրիստոսին ու Անոր սուրբ Սվետարածնին:

Արդ, բոլոր եկեղեցները և բոլոր կրոնները կարող են և պարտին մեկտեղվի, եղածրական և միասնաբար քարոզել ու զորձել հանուն աշխարհի խաղաղության, հանուն ժողովություններու բարեկամության, հանուն պետություններու համերաշխ գործակցության:

Վերջին տասնամյակներուն, եկեղեցիներու միջև զարգացող կեութենիկ շարժումը, կուրորինք թե ամեն բանէ վեր պետք է դափանի այս առարկություններ, անոր կենսագործման մեջ տեսնելով ճշմարտի, իրական ու գործեական միուրայուն ճշմարտի, իրական ու գործեական ճանապարհը աստվածապատության և հոգիներու փրկության:

Այս էր նաև, Մեր կարծիքով, խոր իմաստն ու արժեքը անցյալ մայիսին Մեր պատմական այցին Հոռմ, Նորին Սրբություն Պողոս Զ Քահանաչապետին, որուն հոգվոյն մեջ Մենք տեսանք, զգացինք ճառազարումը իրավ բարի կամեցողության և անարատ սիրո:

Մեր ջերմագին իդան է նոյնակես, որ մեր սուրբ եկեղեցվոյն ծոցին մեջ այսև վերջ զբանեն՝ ամեն իմաստե դատարկված անշատությունները, և շատ ժամանակ չանցած՝ կարողանանք վերականգնած տեսնել միուրայունը մեր եկեղեցիին ու անոր նվիրապետության և հոգևոր միասնությունը մեր հավատացյալ պանուխտ ժողովությին, աստվածակառուց Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի գերազոյն հեղինակության և օրինության ներքը: Յանկալի է և սպասելի որ բոլորի համար անխրատիր լսելի դատեան ու հարցվին Ամենայն Հայոց Հայրապետի հորդորն ու պատզամք օրինականության, միության և համերաշխ գործակցության:

Սիրելի հայաստանցի ժողովուրդ և նոյնաբան սիրելի զավակներ Մեր որ ի սփյուս աշխարհի, սուրբ և լուսաշող Ծննդյան և Աստվածահայտնության ուրախությունը Մեր սրտի մեջ, ձեզի ամենու կրերենք Մեր շնորհակորանքի խոսքը և Մեր հայրական օրինությունը՝ իր բարի մաղթանքներով, որ ձեր կյանքի պայմաններուն մեջ բոլորդ ապրիք ու զրաբանք ամուր կանգնած մեր համեյաց հավատարի ժայռին վրա, միշտ անշեղորեն հավատարի ժայռին մեր եկեղեցվոյ կարծ կանոնին, մեր նվիրական ալանդությանց,


մեր հոգենոր ու ազգային մշակույթի ժառանգությանց, որոնք ամենավավերական ու պայմանական վկայությունը կհանդիսանան հայոց քրիստոնեական հավատքին և ամենաապահով ու անփոխարինելի գրավականները մեր նոր սերունդներու քրիստոնեական և հայկական հոգվույն անաղարտ պահպանան, ինչպես և մեր առաքելական սուրբ եկեղեցպո գոյատևման ու ծաղկման:


Նոր տարվու այս լուսաբացին, ձեր Հայրապետոր, բազմադարյան սուրբ Էջմիածնի հոգեվոր բարձունքնեն, Իր հայացքը սկեռած մեր ազգի սրբազն լերան՝ Արարատի պէտքառ կատարին և հայրենի հրաշալի վերածնության հազար-հազար լուսերուն, անհունարեն մխիթարված, փառք կու տա

պարգևատու բարյաց մեր Աստուծուն և ծընկաշոր կաղորե որ դադրին պատերազմները, որ վերանան անարդարությունները, որ չըքանան թշնամությունները, և մարդիկ ու ժողովորդներ ողջունեն նոր դարաշրջանը խաղաղ գոյակցության և բարի կամեցողության:

Հարազատներ Մեր, ցնծացեք և ուրախ եղեք, հուսով խնդացեք ու հավատքով զորացեք, զի՝ «Քրիստոս ծնաւ և յայտնեցա», «զի թէպէս և երբեմն էիք խաւար, արդ լոյն էք ի Տէր, իբրև զորդիս լուսոյ գնացեք, զի պտուղ լուսոյ ամենավճ բարութեամբ է և արդարութեամբ և ճշմարտութեամբ» (Եփես. Ե 8—9):

Ընորհավոր նոր տարի և Հայտնություն Որդվովն Աստուծո, ամեն:





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՍԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ
ՀՈԳԵՎՈՐ ՊԵՏԵՐԻ ՄԻՋԵՎ. ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ
ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հռոմեական կաթոլիկ եկեղեցու քահանապետ, Նորին Սրբություն
Պ Ո Ղ Ո Ս Զ Պ Ա Պ Ի Ն (Հռոմ),

Կոստանդնուպոլսի հունաց տիեզերական պատրիարք, Նորին Սրբություն
Ա. Թ Ե Ն Ա. Գ Ո Ր Ա. Ս Ի Ն (Ստամբուլ),

Մոսկվայի և համայն Ռուսաստանի պատրիարքական տեղապահ,
Նորին Գերաշնորհություն միտրոպոլիտ Պ Ի Մ Ե Ն Ի Ն,
(Մոսկվա),

Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի պատրիարք, Նորին Սրբություն
Ն Ի Կ Ո Ղ Ա Յ Ո Ս Զ - Ի Ն (Ալեքսանդրիա),

Պատի ուղղափառ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ս. Բ Ո Ւ Ն Ա. Կ Յ Ո Ւ Յ Ե Ղ Զ - Ի Ն (Ալեքսանդրիա),

Երևանի հունաց պատրիարք, Նորին Սրբություն
Բ Ե Ն Ե Գ Ի Կ Տ Ո Ս Ի Ն (Երևան),

Աւախոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
Է Լ Ի Ա Ս Պ - Ի Ն (Դամասկոս),

Աւախոքի և համայն Արևելքի պատրիարք, Նորին Սրբություն
Մ Ա Ք Ս Ի Մ Ո Ս Ե - Ի Ն (Բեյրութ),

Անահիտի սիրիական կաթոլիկ եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
Ի Գ Ն Ա Տ Ո Ս Ո. Հ Ա Յ Ե Կ Բ - Ի Ն (Անգրութ),

Սիրիական օրթոդոքս եկեղեցու և համայն Արևելքի պատրիարք,
 Նորին Սրբություն Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Հ Ա Կ Ո Բ Գ - Ի Ն (Դամասկոս),
 Համայն Եթովպայի պատրիարքական տեղապահ, Նորին Գերաշնորհություն
 Ա. Բ Ո Ւ Ն Ա Թ Ե Ո Ֆ Ի Լ Ո Ս Ի Ն (Աղյու-Աքեբա),
 Հնդիաստանի և Արևելքի մալաբար եկեղեցու կաթողիկոս, Նորին Սրբություն
 Բ Ա Ս Ի Լ Ի Ո Ս Ո Ւ Կ Ե Ն Ա . - Ի Ն (Քոթալամ),
 Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս, Նորին Սրբություն
 Ե Փ Բ Ե Մ Բ - Ի Ն (Թբիլիսի),
 Ռումին օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
 Ժ Ո Ւ Ս Ի Ն Ի Ա Ն Ի Ն (Բուխարեստ),
 Բուլղար օրթոդոքս եկեղեցու պատրիարք, Նորին Սրբություն
 Կ Ի Ր Ի Լ Ի Ն (Սոֆիա),
 Լիբանանի մարոնիտ պատրիարք, Նորին Սրբություն
 Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Զ Ի Ա Դ Ե Ի Ն (Բեյրութ),
 Քենտրոնական արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և
 միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Մ Ա Յ Ք Լ Ռ Ե Մ Զ Ի Ի Ն
 (Լոնդոն),
 Աթենքի և համայն Հելլադայի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 Հ Ե Ր Ո Ն Ի Մ Ո Ս Ի Ն (Աթենք),
 Սերբիայի և համայն Հարավալավիայի պատրիարք, Նորին Սրբություն
 Հ Ե Ր Մ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
 Վարչավայի և համայն Լեհաստանի միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն
 Ս Տ Ե Ֆ Ա Ն Ի Ն (Վարչավա),
 Պրագայի և համայն Չեխովովակիայի միտրոպոլիտ,
 Նորին Գերաշնորհություն Դ Ո Ր Ո Ֆ Ե Ի Ն (Պրագա),
 Հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք, Նորին Ամենապատվություն
 Ի Գ Ն Ա Տ Ի Ո Ս Պ Ե Տ Ր Ո Ս Ժ Զ Պ Ա Ն Ի Ն Բ եյրութ),
 Կիպրոսի արքեպիսկոպոս, Նորին Գերաշնորհություն
 Մ Ա Կ Ա Ր Ի Ո Ս Ի Ն (Կիպրոս),
 Նորին Գերազանցություն կարդինալ
 Ա. Ղ Ա Զ Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վատիկան),
 Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար
 ղոկտ. Է. Բ Լ Ե Յ Կ Ի Ն (Ժնև),
 Վիեննայի արքեպիսկոպոս, Նորին Ամենապատվություն
 կարդինալ Ֆ Բ Ս Ա Յ Գ Յ Ո Ն Ի Գ Ի Ն (Վիեննա),

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուրերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Յ. Պ. Մ Ա Տ Ո Ւ Լ Ի Ս Ի Ն (Երգա).

Լատվիական ՍՍՀ ավետարանական-լուրերական եկեղեցու արքեպիսկոպոս,
Նորին Գերազանցություն Ա. Լ. Ֆ Բ Ե Պ Տ Ո Ո Մ Ի Ն Գ Ի Ն (Տալլին),
Միջին Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության նախագահ,

Վերապատվելի Հ Ո Վ Հ Ա Ն Ն Ե Ս Ա Հ Ա Ր Ո Ւ Յ Ա Ն Ի Ն (Բելգրադ),
Ֆրանչիսկյան միաբանության կուսառո
Ն. Է Ր Մ Ի Ն Ի Ո Ռ Ո Ն Կ Ա Ր Ի Ի Ն (Երուսալեմ),

ԱՄՆ-ում Քրիստոսի եկեղեցիների Ազգային խորհրդի ընդհանուր
քարտուղար, Գերազատիվ հայր Է Ր Ո Ւ Ի Ի Ն Է Ս Փ Ի Ի Ն (Նյու-Յորք),
Մոնակորի եպիսկոպոս, Գերաշնորհ Ժ Ա Կ Ռ Յ Ո Ւ Պ Ի Ն (Մոնակո),
Մխիթարյան ուխտի աբբանայր, Գերապահառ հայր

Պ Ո Ղ Ո Ս վարդապետ Ա Ն Ա Ն Յ Ա Ն Ի Ն (Վենետիկ),
Մխիթարյան ուխտի աբբանայր, Գերապահառ հայր
Մ Ե Ս Ր Ո Պ վարդապետ Հ Ա Պ Ո Զ Յ Ա Ն Ի Ն (Վիեննա),
Գերապատվելի Հ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ի Ն Հ Ե Լ Վ Ա Ծ Յ Ա Ն Ի Ն (Մարտի):

Աստուծո ողորմությամբ նուսացյալ ու խոնարհ սիրով կողմանորենք ան-
գամ մը ևս մեծ ավետիսը Քրիստոսի սուրբ Մհերյան և պատգամը երկնքին՝
«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ նաճու-
թին»:

Աստված, խաղաղություն, բարի կամեցողություն ի մարդիկ: Անա խոր-
հուրդը մարդկության փրկիչ մեր Տիրոց Քրիստոսի ծննդյան որ նոր նույսով
և նոր լուսով կեցնե մեր նոգիները բոլոր, այսօր երբ տակավին մեր աշ-
խարհին մեջ կան պատերազմներ, կան անարդարություններ, կան բազում
մղումներ ու գործեր ոչ բարի կամեցողության մարդոց և ազգություններու
միջև:

Այսօր, նոգեկան մխիթարություն է Մեզի համար, իբրև առաջին սահմա-
գործ Հայաստանյաց առաքելական եկեղեցին, ամբողջ սրտով Ձեզի միա-
նալ Մեր աղոթքներով ու Մեր մաղթանքներով, որպեսզի երկրի վրա լինի
խաղաղություն և մարդոց մեջ բարի կամեցողություն, պետություններու միջև
համակեցություն:

Սուրբ տոներու և նոր տարվո երջանիկ առիթներով բարի եղեք ընդունելի
Մեր եղբայրական հարգալի ողջունը և սերը, ամենաշերմ մաղթանքներով
Ձեր արեշատության և Ձեր սուրբ առաքելության լուսաշող հաջողության հա-
մար:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԽԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿՅԱԹՈՂԻԿՈՍ
Ա.ՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


Ա. Է Զ Մ Ս Ա Ծ Ի Ն

* * *

Վահագիան Հայրապետի՝ ԱմաՅորի և Փրկչի հրաշափառ և սորք Ծննդոյան շնորհավորական գրություններին ի պատասխան ստացվել են քույր Եկեղեցիների հոգևոր պետերի՝ այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական եղբայրության ու համագործակցության արտագին ռույր Եկեղեցիների միջև:

Համուն Հայոց Հայրապետի շերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:





ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱԾԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ
ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՒՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋԱՌՈՂԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ,
ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՇԱԳՐԵՐՆ ՈՒ
ԳՐՈՒԹՅՅՈՒՆՆԵՐԸ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԵՒԿԻՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹՅՈՒՆ
Տ. Տ. ԽՈՐԵՆ Ա. ԻՆ (Անդրիաս),

ԵՐՈՒՍԼԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ,
Տ. ԵՂԻՉԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Երոսալեմ),

ԹՈՒՐՔԻՌ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ, ԱՄԵՆԱՊԱՏԻՎ,
Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ (Ստամբուլ),

ԲԱՐԵԽՆԱՄ ԲՈԼՈՐ ԹԵՄԱԿԱԱ, ԱՌԱՋԱՌՈՂՆԵՐԻՆ
ԵՎ ԳԵՐԱՊԱՏԻՎ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻՆ:

Սուրբ Շննդյան լուս ավետիսով և Նոր տարվո շնորհավորանքով, կող-
ջունենք զՁեզ և Մեր հայրական օրինությունը կրերենք տիրախնամ Աթոռիդ,
ովստապահ և եկեղեցանվեր միաբանությանդ և համայն մեր հավատացյալ
ժողովուրդին, ամենաշերմ մաղթանքներով որ Տերը բոլորը պահե-պահապանէ
խաղաղ ու անփորձ իր սուրբ հովանիին ներքե, ամենուն բաշխելով իր շնորհ-
ներն ու բարիքները առատ:

Բարյաց պարզեատու փրկիչը մեր Քրիստոս, իր լուսը խոյ ափուն մեր
աշխարհին վրա ապրող մարդոց և ժողովուրդներուն, առաջնորդելով զանոնք
բոլորը անխափի դեպի նավահանգիստը խաղաղության, արդարության և եր-
ջանիկ համակեցության:

Խաղաղություն, բարի կամեցողություն և միության ոգի նաև համան մեր նկեղեցին ու ժողովուրդին ի շինություն նոգեսր կյանքի և ի հաջողություն կրթանքեր ու ազգաշեն գործոց:

Մայր Սթռո սուրբ Էջմիածնեն, Զեզի մեծ ավետիս և պատգամ Փրկարար՝ «Փառք ի բարձուն Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաւատին»:

Ընորիք և սեր Տիառն մերո Հիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, այժմ և հավիտյան, ամեն:

Եղբայրական սիրո ողջունիվ

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԽՍՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆՅԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Է Զ Մ Ի Ա Շ Ի Ն

*
* *

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կենտրոնական վարչությանց և խորհուրդներին, Հայկական բարեգործական ընդհանուր միության Կենտրոնական վարչությանը (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենիկյան հիմնարկության Կենտրոնական խնամակալությանը (Լիսարոն). Արգարյան ավանդի և ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Ունիդոն), ս. Էջմիածնի հանձնահամբին (Բեյրութ), Վարդանանց ասպետներին (Ուստերտառուն), Վալկառայի հայկական ընկերության վարչությանը (Կապկայա), գաղութային վարչություններին, հայրենակցական, մշակութային, տիեզրացից, երիտասարդաց և օրինութաց զանազան կազմակերպություններին, Մայր Սթռոի և նոգեսր նեմադրանի բարերարներին և ծանոթ ազգային դեմքերին:

*
* *

Ծնորհազարդ Եղբայր ի Քրիստո,

Նոր տարվան և ս. Ծննդյան տոնին առթիվ կներկայացնենք Ձերի Վեհափառության Մեր ջերմագին շնորհավորությունները և կմայթնենք Զեզի բաջառողջ և երշանկալից երկար կյանք և նկեղեցանքեր բեղուն գործունեություններին:

Անք սրտի խորագույն իշճն է, որ մարդացյալ Փրկչին մսորին վերև շոշացող լուսասփյուր աստղը իր կենսատու ճառագայթներով պայծառացնելու ջերմացնե ամեն հայու սիրտն ու նոգին որպեսզի անոնք ըլլան մի և ապրին նորայրական սիրո և մշտառ խաղաղության մեջ:

Կաղողենեք որ Բեթղեհեմի մասուկ Հիսուսը, անփոր ու անխոռվ պահն ու պամպան Հայց. ս. եկեղեցին և անոր նվիրապետական Աթոռները և ծաղկյալ ու բարգավաճ կյանք պարգնե հանուր հայության որ ի Հայատու և ի սիրուս աշխարհի:

Մնամ Եղբայրական սիրո ջերմ ողջունիվ.

Աղոթակից՝

Խ Ո Ր Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱԿՆ ԿԵԼԻԿԻԾ

Նոր տարվա և ս. Ծննդյան տոների առթիվ ընդունեցեք ամենասնկեղծ շնորհավորանքները և բարեմաղթությունները իմ՝ Սրբոց Հակոբյանց միաբանութեան անունից:

Թող ամենակարողն Աստված պարգևե Զերդ Սրբության բաջապահություն և բազում երշանիկ տարիների նովիսավետություն՝ ի պայծառություն մեր եկեղեցուն, հանասասնություն Մայր Աթոռին և ի բարօրություն նայ ժողովրդին և հայրենիաց:

ԵՎԻՃԵ ԱՐՁԵՊԻՍԿՈՊԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԵՐՈԽԱԾԴԵՄԻ

ԵՐՈԽԱԾԴԵՄ

Վեհափառ Տեր,

Ամանորը և հաջորդող ս. Ծննդյան տոնը կրերեն մեզի դարավոր, բայց երբեք չինցող և չմաշող հայերժական ճշմարտությունը, թե պատմության մեջ երշանիկ օր մը, լուս ու պայծառ գիշեր մը Աստվածությունը «ընտ մեզ» եղավ նաև ֆիզիկապես:

Արդարն մարդեղությամբ Աստված «բնակեաց ի մեզ», բաժնեց մեր վիշտերը. «Նա զցաս մեր երարձ». և մեր փոքր սերերուն՝ մեր բարեկամության և մեր ընկերային սեղաններուն մասնակից դարձավ. «Ուոք բարեկամը իս էք»:

Օրինենք զԱյն սիրով և սիրտով. «Զի վասն մեր մարմնացաւ»:

Սիրներ զԱյն. «Զի նա նախ սիրեաց զմեզ»,

Փոխանցենք իրարու նրեշտակեն տրված մեծ ավետիսը «Որ եղի վասն ամենայն ժողովրդեանն»:

«Զի ծնա մեզ պաօք Փրկիչ»:

Սուրբ ու երշանիկ այս ասիքով կրաղթենք Զեր Ս. Օծության հաստատությունը և սրտի անդորրությունը շաբանակերտ համար նոյնքան նվիրումով և նոյնքան արդյունավետությամբ Զեր նովիսավետական գործը՝ ի միմիարություն Սրբության, ի շինություն և եկեղեցվուս և ի մեծ վասու Մարմնացալ Որդիվոյն և մեր Տիրոջ և Փրկչին, որ է օրինակ ընդ Հոր և Հոգիվոյն Սրբությունը և մեր Տիրոջ և Փրկչին, այսինքն աղոթակից»:

ԵՆՈՐՃՔ ԱՐՁԵՊԻՍԿՈՊԱՍ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԳԻՆ

ՍՏԱՄԲՈՒԼ,

Ամսանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև ամենաշերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ այլ շնորհավորական նեռագրեր և համակներ արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանաց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, նաև և օտար պաշտոնական առնախորդություններից:



ԽՈՍՔ ՄԸ ԾՆՍԴՅԱՆ ԱՌԹԻՎ

«Երբեւ տեսին զատողն, խնդացին
լոյն ուրախութիւն մնձ»:

(Մատթ. Բ. 10)

Նորեն կշողա քրիստոնեական փրկության
պայծառ լոյսը:

Մեր հոգիները պետք ունին անոր, փարա-
տելու համար մեր գոյության մութն ու մահ-
յան սպառնալիքը: Դրավ է որ համաստեղու-
թենեն փրթած աստղ մը չի՝ ծագիր այսօր,
անարև այրի մը շորջը փարփելու և ցուց
տարու համար մեզի Մանոկ Հիսուսի շքնալ
խանձարուը, բայց Գիտության աստղեն
շատ ավելի կրնա չինչ ու անրիծ ըլլալ մեր
Գիտակցության փոքրիկ ճրագը, եթե աև
նշողէ մեր ներքին տաճարին մեջ: Օրվան
հրաշալի աստղը, որ իր նմաններուն մեջ եր-
շանիկ բախտն ունեցավ պատմական հորի-
զոն մը լուսավորելու մեր երկրագունդին
վրա, մեզի իբրև նշանակ կծառապէ այսօր,
արտահայտելու համար մեր համոզումը՝ թե
Հիսուս ալ, մարդկության ծոցին և իր եղ-
բայրներուն մեջ, այն մեկնատիկ աստղն ե-
ղապէ՝ որ սա քարայր-աշխարհին վերև հա-
վերժացնելով իր ճառագայթը՝ հավասարա-
պես ցոլացոց իր լոյսը, ամեն ժամանակի
գիտուն մոգերու և տգետ հովհիվներու իդահն
ու նայվածքին.


Ի՞նչ կըլլար հետևանքը, եթե հավատաց-
յաներուն չծագեր վերստին պղ երկնավոր
փառքը՝ Ավետարանի խորհրդավոր բարձ-

րութենեն:—սահմանափակ կյանքի մը
տիտուր իրականություններեն կմթագներ մեր
ճակատագիրը, անհատնում վիշտերու տա-
ռապանքեն կդառնանար մեր հովսերուն
քաղցրությունը, նյութին բռնության ու կա-
պանքներուն գերի կիմսար մեր ազատ շուն-
չը, անհավատ մտածություններու հաճա-
խանքեն կրաքապվեին մեր կենսական ուժե-
րը. մեկ խոսքով՝ կհափանվեին այն գերա-
գոյն ներշնչումները որոնցմով սրբագրծեց
ու խանդականց Հիսուս մեր բովանդակ
սիրուն ու սերը:

Մեր Փրկիչն է որ կացելէ այսօր մեզի:
Եթե Ան մերծիկ կարծեցյալ իրեններեն՝ ինչ-
պես երեսն, ո՞րքան բազմաթիվ են սակայն
անոնք՝ որ բուն իրեններն ըլլալով մեծ որա-
խությամբ կողջունեն զինքը, ավետավոր
հրեշտակին հրավերովը:

Մենք կհափատանք Անոր: Վառենք ուրեմն
մեր հավատքը շահավորող փոքրիկ ճրագ-
ները մեր հոգեկան սրբավայրին մեջ, և ահա
անոնցմով պիտի կրնանք ատեղծագործել ա-
ռաջին օրվան հրաշալի աստղը, ու Քրիստոս
պիտի ծնի՝ մեր մեջ:

Եղիծ Ա.Ր. ԴՈՒՐՅԱՆ
(«Սիոն», Երուսաղեմ, 1929 թ., թիվ 1, էջ 2)



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ.

Հունվարի 6-ին, չորեքշաբթի.— «Տօն Ծննդեան և Մկրտութեան Տեառն մերոյ Ֆիստիք Քրիստոսի»:

Մայր տաճարը տունականորեն զարդարվել է մեծ տոնի ուրախ առիթով: Առավոտյան ժամերգությունը պահանջական հանդիպությամբ պաշտվում է Մայր տաճարում մասնակցությամբ Մայր Աթոռի ողջ միաբանության:

Ժամը 11.30-ին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով և զանգերի ավետավոր դողանչների ներքո առաջնորդվում է Մայր տաճար՝ ս. Ծննդյան հանդիսավոր պատարագը մասուցելու:

Մայր տաճարը լիբն է աղոթավոր ովտափորներով և հավատացյալներով:

Հայրապետական և պատարագի ժամանակ Սեղանին սպասարկում են վարդապետների, քահանաների դասն ու սարկավագների խումբը: Մայր տաճարի կամարների տակ հնչում է «Խորհրդու մեծ և սրանչելի»-ն՝ հոգիները լցնելով ս. Ծննդյան որախությամբ և պատզամով:

Ամեն կողմ թ' լս, խո՞ւնկ ու աղո՞թք:

«Հայր մեր»-ից առաջ ազգին Վեհափառ Հայրապետը ս. Ծննդյան խորհրդի մեծ ավետիքը տալով հայ եկեղեցուն ու բովանդակ հայությանը, խոսում է ոգեշունչ և իմաստալից իր քարոզներից մեկը՝ օրիւ տոնի համամարդկային, հոգեւոր ու քարոյական մեծ նշանակության մասին:

Հայրապետական քարոզը, որը տպագրվել է ամսագրի սույն համարում (էջ 3), նոյն գիշեր ձայնասփուխում է Երևանի ոսդիլայանից:


Հայրապետ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ սեղանի թեմի առաջ կատարվում է Զօրօնեաց սրբազն կարգը՝ ի հիշատակ Քրիստոսի մկրտության «Փ Յովհաննէ, ի Յորդանան գետ»: Հանդիսադիր Վեհափառ Հայրապետը ընթերցում է ս. Բարսեղի Զօրօնեաց մեծ աղոթքը:

Մայր տաճարի կամարների տակ հնչում են դաշն ու հոգեւաբարար «Ով զարմանալի», «Այսօր ծայնն հայրական» մկրտության հոգելից տաղերը:

Սրբազն արարողության ավարտին հավատացյալները ջերմեսանդ քարեպաշտությամբ վերցնում են Քրիստոսի մկրտության օրհնյալ ջրից՝ հոգեւուն հան պայծառացած օրվա մեծ տոնի խորհրդով:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, որ ս. Ծննդյան տոնի առիթով ընդունում է շնորհավորություններ, ապա օրինում ազգն ու եկեղեցին, հայրենիքն ու ժողովրդին՝ մաղթելով խաղաղություն աշխարհին, համերաշխություն ու հաշտություն բոլոր ազգերին:

Ն. Ս. Օծության «Պահպանիչ»-ով ավարտվում է օրիւ հանդիսադրությունը:



ՄՈՎՄԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՇԱՐԱԿԱՆ Ա. ԾԱՆՈՂԵԱՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ առոր յայտնեցաւ。
Հովհիքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրինեցէք, զի վասքն մեր մարմնացաւ,
Անբաւելին երկնի և երկրի, ի խանձարուս պատեցաւ.
Ո՛չ մեկնելով ի Հօրէ, ի տորբ այրին քազմեցաւ,
Այսօր ցնան երկինք ի վերուստ մեծապայծան աւետեօր.
Եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:
Այսօր յայրին ընճայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ.
Եւ հրեղինաց բազմութիւնը յերկնից յերկիր վայր իջեալ:
Այսօր հովուացըն տեսեալ զարդարութեան արեգակն.
Եւ ընդ հրեշտակըս երգէին փառք ի բարձուն Աստուծոյ:

ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

ՏԱՂ ԶՐՈՒՀՆԵԱՑ

Ո՞վ զարմանալի, խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուծ, ի Յորդանան եկեալ:
Կամէր մըկըրտիլ, ի ծառայէն իրմէ.
Չառնոյր Կարապետն, ըգմըկըրտելն ի յանձն:
Յորդանան լուսալ, փախըստական դառնայր.
Վըտակ առ վըտակ, պատգամատր լինէր:


Գետ, մի՛ զարմութիր, քո արարիշն եմ ևս.
Եկեալ մըկըրտին, և բասնամ բգնեալս:
Յիսոս յսոաչեաց, աստուածութեամբն ի շորեն.
Հանդերձ Յօհաննէու, Յիսոս ի գետն ենու,
Երկինք պատուեալ, ձայն ի յերկնից իշեալ,
Չայն Հօր ի բարձանց, Որդոյն իր վըկայեալ:
Դա է իմ որդի, ընդ որ հաճեցայ, ասէք.
Դըմա բարդոք որդիք մարդկան ձայնէք:
Սուրբ Հոգին իշեալ, աղանակերպ տեսլամք,
Յայտնեալ ցուցանէք, Հօր փառակից զՈրդին:
Արդ օրինեալ է Հայր, և համագոյ Որդին,
Հոգոյն ճշմարտի, փառք յախտեանս, ամէն:

ՀՈՎՃԱՆՆԵՍ ԵՐՃՆԿԱՑԻ

ԱՅԼ ՏԱՂ ԶՐՈՒՀՆԵԱՑ

Այսօր ձայնն հայրական, յերկնից իշեալ հաճոյական.
Սիրեցելոյ Որդոյ վկայն, այ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան.
Յորդորական ձայնի երգէր մեծ կարապետըն Յօհաննէս:
Այսօր երկիրս երկինք եղեն, երևելով Աստուածորդումն,
Սիրով եկեալ ի մըկըրտիլ:
Այսօր վերին դասր հրեշտակաց, որախացան
Ընդ սուրբ գալուստ Աստուածորդույն ի Յորդանան.
Այսօր եկեալ Աստուածորդին, ի Յորդանան խոնարհութեամք,
Զրով մըկըրտիլ ի Յօհաննէտ.
Այսօր մըկըրտիչըն Յօհաննէս, ի մըկըրտիլըն հրաժարէր.
Թէ ինձ պարտ է ի քէն մըկըրտիլ.
Այսօր գոչէր քաղցըը ձայնին, Աստուածորդին կարապետին,
Պարտ էր զօրէնաըն կատարել.
Այսօր Յօհաննէսմ դողալով, ձեռօրն լգՏէրըն մըկըրտուր,
Ի մեծ յորձանսն Յորդանանո.
Այսօր բացեալ փակեալ երկինքն, զոր յանցանօք փակեաց Ադամ,
Եւ Հայր Որդի զնա կարդարով.
Այսօր Հոգին աղանակերպ, իշեալ յերկնից ի Յորդանան,
Իր փառակիցն վըկայերով.
Այսօր երկինք զարդարեցան, երկիրս ծաղկօր զուարճացան,
Զաստուած տեսեալ ի Յորդանան.
Այսօր հրեշտակը անդրէն պարեն, ժողովք ամէն օրինարաննէն,
Ռզմըկըրտեալն Աստուած գովեն.
Այ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան:





ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՌԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 31, հինգշաբթի: Անցնող
տարվա վերջին օր:

Մայր Աթոռի դարավոր կամարների տակ ամսնորյա ուրախ երեկո է: Ամենուրեք տիրում է ոգևորություն, աշխուժություն: Ինչ-որ արտակարգ մի ուրախություն համակել է բոլորին:

Հայկական քաղցրահամ մրգերով, գիճիներով և այլ տևասկի բարիքներով են ծանրաբենված հոգևոր ճեմարանի հանդիսությանց դամիճնում Ամանորի համար պատրաստված լիառատ սեղանները: Նրանց շորջ համախմբվել են Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի, Վերատոգիշ հանձնաժողովի, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմի անդամները, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, մայրավանքի պաշտոնությունը և այլ հրավիրյալներ, որոնք անահիման երախտագիտությամբ են լցված դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածինը և հրա արժանինայի Գահակալը:

Երեկոյան ժամը 19.30-ին Վեհափառ Հայրապետը, տ. Հայկազոն, տ. Կոմիտաս, տ. Հովհաննեսը սրբազնության ընկերակցությամբ, մուտք է գործում դամիճ, սրտագին ծափահարությունների ներքո, և օրինում ամանորյա սեղանը:

Սեղանների շորջ առեղծվում է շերմ, ընտանեկան մթնոլորտ:

Ամանորյա սեղանը դեկալարում է հոգևոր ճեմարանի տեսչի պաշտոնակատար արժ,

տ. Հովհաննես քին. Մարուքյանը: Տեր հայրը գեղեցիկ մի ուղերձով դիմում է ազգիս Վեհափառ Հայրապետին՝ շնորհավորելով Նորին Արքության նոր տարին, ապա վեր է հանում հավիտենականության գիրկն անցնող հին ու եկող նոր տարվա խորհուրդը, ինչպես նաև մարդկային կյանքի նպատակը. «Մարդ արարածը, որը Աստոծո ստեղծագործության գլուխ-գործոցն է, իր գոյությունը հավերժացնելու, իր նվաճումները արձանագրելու համար ստեղծել է հավիտենականության մեջ ժամանակի հասկացությունը, իսկ նոր տարին մարդու համար դարձել է անվանական ժամանակի, միշտ վերանորդվող կյանքի խորհրդանիշը»:

Մարդ էակի նպատակը պետք է լիճի կյանքը լցնել աստվածահան, բարի, հիշշարժան գործերով, որովհետև կյանքը մարդուն տրված պարգևն է հավիտենականության մեջ կենդանի մնալու համար»,—ասում է տեր հայրը:

Վերջում տ. Հովհաննես քահանան, դիմելով Հայոց Հայրապետին, ասում է. «Նոր տարին Ձեր շորջը համախմբվելու և մեր ոխտերը վերանորոգելու առիթ է: Թույլ տվեք, Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչության անունից շնորհավորել Ձեր նոր տարին, մաղթել Ձեզ երկա՞ր, երկա՞ր խաղաղ, երջանիկ ու ստեղծագործ տարիներ»:

Այնուհետև Մայր տաճարի լուսարապես տ. Հայկազոն արքեա. Աբրահամյանը պատճին բաժակն առաջարկում է բարձրաց-

ԱԵԼ Մայր Աթոռի անսասանության, պայծառության և նրա արժանավոր գահակալ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թանգարակին կենաց արկշատության համար:

Բոլոր ներկաները հոտմիայս բաժանկ են բարձրացնում Մայր Աթոռի հավերժության և նրա Գահակալի կենաց:

Խանդավառ մթնոլորտում ճեմարանի երգչախոսքը կատարում է «Էջ Միածին ի Հօր!» շարականը:

Ամանորի սեղանների շորջ ստեղծված խանդավառությունը կրկնապատճեմ են նոգեվոր ճեմարանի ասեները՝ իրենց արտասանություններով և երգերով: Ճեմարանի երգչախումբը, Խորեն Մելիսանեցյանի շնորհավի ղեկավարությամբ, կատարում է «Ճեմարանի քաղերգ», «Կաղանդ է այսօր», «Մեղան է առատ», «Հայոց գինի», «Երևան բաղ եմ արել», «Էրեբունի», «Կենաց երգ», «Հոյ նար», «Ֆոռկա, Ֆոռկա», «Գարուն Երևան» խըմքերգերը:

Գ դասարանի ուսանող Պ. Քենարլանը արտասանում է Գ. Սարյանի «Օրացուց»-ը, Ա. խարանի ուսանող Վ. Նաջարյանը՝ Պ. Վարուժանի «Ճան»-ը, Ա դասարանի ուսանող Ա. Բարովյանը՝ ուսերեն մի ուսանավոր՝ Նոր տարվան նվիրված:

Գ դասարանի ուսանողներ Ա. Արթինյանը և Հ. Աղաջանյանը դաշնամուրի վրա կատարում են Ա. Խաչատրյանի «Կոպակ» ատելագործությունը, Բ դասարանի ուսանող Կ. Հովհաննելի «Վապս»-ը:

Հոգևոր ճեմարանի ուսանողության անունից Վեհափառ Հայրապետին ուղղված ուղերձ-շնորհավորական խոսք է ասում Ա. խարանի ուսանող Ա. Արաքաջյանը: Նա վաստանենում է բոլոր ներկաներին, որ նոգեվոր ճեմարանի ուսանողները պատմեն կձգտեն էլ ավելի լավ տպորել, զինվել հավատքով ու գիտություններով՝ իրականացնելու համար իրենց վրա դրված բոլոր հոգեստերը: Իր խոսքի վերջում նա ասում է. «Սիրելի Վեհափառ, թող Զեր սուրբ Աջք մի՛շտ հովանի մեզ, թող Զեր հայրական սերը

մի՛շտ անսպակաս լինի մեզանից, որպեսզի մենք առավել խանդավառությամբ և նավատրով տվորենք և պատրաստ լինենք վարդիվա մեր սուրբ ծառապությանը»:

Նոր տարվա խոնիքով համալված, հոգիչ, ջերմ եղությունը են ունենում՝ վրահայոց թեմի առաջնորդ ու Կոմիտաս եպս. Տեր-Սուելիանյանը, ովաստավորաբար Մայր Արտոնում գտնվող Բոստոնի սիմֆոնիկ նվազախմբի մենակատար, մեծանուն երգեհոնահանը Պ. Ժամկորչյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հայիսյանը, հոգևոր մեմարանի դասախուս Ս. Անդոսյանը:

Ազնութեան խանդավառ մթնոլորտում ելույթ է ունենում Վեհափառ Հայրապետը և Նոր տարվա սփիթով տախու է բոլոր ներկաներին իր հայրական պատգամներն ու օրինությունը՝ սրտեսանդն կերպով շարունակելու այս մեծ Հաստատության պայծառության համար կատարվելիք սուրբ աշխատանքները:

Հոգևոր ճեմարանի Գ դասարանի ուսանող Արտաշես սրկ. Մուշելյանը գրական դիպուկ և զվարճակի «Լաղաջնություն» է բաժանում միաբանությանը և ճեմարանի դասախուական կազմին:

Մի պահ հանգչում են դաշիճն լուսերը: Հոգևոր ճեմարանի երգչախմբի տղաները վաս մոմեր ճեռուերին շարություն մտնում են դաշիճն, տեղ գրավում դաշնամուրի մոտ և մոմերի դրդողունի ու փայլվող լուսերի տակ խորհրդավոր ու մեղմորեն երգում են՝ Ա. Շնիւրյան խորհրդին նվիրված տաղեր ու երգեր: Խաչնամուրի վրա ընկերակցում է երգեհոնահանը Պ. Ժամկորչյանը:

Փոքր ընդմիջումից հետո, հանդիսարդար վերջում, տեղի է ունենում վիճականանություն: Ներկաներից շորջ 15 հոգի նվերներ են շահում վիճականանությամբ:

Ժամը 23-ին խանդավառ մթնոլորտում, Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով և խմբովին երգիված «Հայր մեր»-ով, սամարտվում է ամանորյա հանդիսարդությունը նոգեվոր ճեմարանի հարկի տակ:



ՀԱՅՐԱՎԵՍՏԻ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ 1971 թվականից սկսած «Էջմիածն» ամսագրի շապիկը և տիտղոսաթերթը մեր ընթերցողներին է ներկայացվում գեղարվեստական նոր, ինքնատիպ ձևավորումով:

Ամսագրի նոր շապիկը և տիտղոսաթերթը պատրաստել է ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի ջերմորեն շնորհակալություն ենք հայտնում հարգարժան արվեստագետին:

Հունվարի 1-ին, ուրբաթ.—Կաղանդ և տարեմուտ.

Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Մուշեղ Վրդ. Պետիկյանը:

Պատարագի ավարտին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Խջման և սեղանի առաջ տեղի է ունենում Հայրապետական մալթանք: Մայր տաճարի լուսարարապետ տ. Հայկազո՞ն արքեակ. Աքրածիամանը քարոզում է Նոր տարվա վերանորոգող խորհրդի մասին և ապա ներկայացնում է Վեհափառ Հայրապետի եկեղեցանվեճի, ազգօգուտ գործունեությունը անցնող տարում:

Սյունիեսու միաբանությունը, սարկավագները և հոգևոր հեմարտանի ուսանողությունը եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետին առաջնորդում են Վեհարան՝ շնորհավորելու Նրա Նոր տարին և ստանալու Նորին Սրբության օրինությունը: Վեհարանում միաբանության անունից շնորհավորական սրտագին խոսք է ասում տ. Հովհաննեսը. Սահմանադրան:

Վեհափառ Հայրապետը հայրական գործութանքով և գոհունակությամբ ընդունում է միաբանության շնորհավորանքը և ապա օրինում բոլոր ներկաներին,

* *

Հունվարի 2-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի համագանությամբ, տեղի է ունենում Գերագույն հոգևոր խորհրդի ներթական հիստոր:

* *

Հունվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Գեորգ Վրդ. Աերայդարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* *

Հունվարի 3-ին, կիրակի.—Նոր տարվա և ս. Ծննդյան տոների առթիվ համեստություն-

Աերին մասնակցելու համար Բաքր մեկնեցին Կարպիս սրկ. Գալստյանն ու Արտաշեն սրկ. Մուշեղյանը: Տոներից հետո սարկավագները Մայր Աթոռ վերադարձան ամսի Տ-ին, որբաթ օրը:

* * *

Հունվարի 5-ին, Երեքշաբթի.—Ծրագալոյց Մննդեան և Աստուածայացտեռթեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր, Երեկոյան ժամը 17-ին, Մայր տաճարուն, Վեհափառ Հայրապետի հախագահությամբ, տեղի են ունենում Ծրագալոյցի հասուկ արարողություններ և Դամելի գրքի ընթերցում: Ծրագալոյցի և պատարագը մատուցում է տ. Մուշեղ Վրդ. Պետիկանը:

Հավարտ և պատարագի Վեհափառ Հայրապետը հախագահում է և Ծննդյան հայատոնակին և ապա «Խորհուրդ մեծ» շարականի երգեցողությամբ և եկեղեցական բափորով առաջնորդվում է Վեհափառ:

* * *

Հունվարի 7-ին, հինգշաբթի.—Յիշատակ մեռեղու.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Գևորգ Վրդ. Սերապիորյանը:

Հավարտ և պատարագի տեղի է ունենում Բոգեհանձիստ՝ վասն համորեն հնչեցելոց:

* * *

Հունվարի 10-ին, կիրակի.—Մայր տաճարում և պատարագ է ցատուցում տ. Հակոբ քին. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 11-ին, երկուշաբթի.—Ամանորի և Ս. Ծննդյան տոների արձակուրդներից հետո նոգեսր ճեմարանում վերսկսվում են դասախոսությունները:

* * *

Հունվարի 13-ին, չորեքշաբթի.—Տօն անուանակոչութեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Նշան քին. Բելլերյանը:

* * *

Հունվարի 14-ին, հինգշաբթի.—Տօն ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին.

Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Հովհաննեն քին. Մարտիքանը:

* * *

Հունվարի 15-ին, որբաթ.—Այսօր, ժամը 15-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի հախագահությամբ, տեղի է ունենում Մայր Աթոռին առընթեր նարտարապետական հանձնաժողովի հիսուր:

* * *

Հունվարի 15-ին, որբաթ.—Այսօր Արսրան սրկ. Գալստյանը և Հակոբ սրկ. Նալբանդյանը մեկնում են Թբիլիսի՝ և Ծննդյան տոների առիթով մասնակցելու եկեղեցական արարողություններին: Սարկութագները Մայր Աթոռ վերադարձան ամսի 20-ին:

* * *

Հունվարի 16-ին, շաբաթ.—Այսօր Դավիթ սրկ. Դիլանյանը մեկնում է Արմավիր՝ և Ծննդյան տոնի արարողությանը մասնակցելու համար, Նա Մայր Աթոռ է վերադարձան ամսի 23-ին:

* * *

Հունվարի 17-ին, կիրակի.—Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Նարեկ Վրդ. Շաքարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Հովհաննեն Սկրտչի մասին:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հունվարի 19-ին, երեքշաբթի.—Այսօր նոգեսր ճեմարանում սկսվեցին 1970—1971 ուսումնական տարվա կիսամյա քննությունները, որոնք ավարտվեցին հունվարի 26-ին, երեքշաբթի:

* * *

Հունվարի 26-ին, երեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառում, Վեհափառ Հայրապետի հախագահությամբ, տեղի է ունենում Գերագոյն նոգեսր խորհրդի ներթական հիսուր:

* * *

Հունվարի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, ըննություններից հետո, նոգեսր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը մեկորյա ուստի մեկնեցին և Գեղարդ:

* * *

Հունվարի 31-ին, կիրակի.—Մայր տաճարում և պատարագ է մատուցում տ. Գևորգ Վրդ. Սերապիորյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ծով կենցաղողս համապատ զիս ալեկոծ» քննարանով:

* * *



ԱՀԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՒ ՏԵՐՅԱՆ

(Խոշնորդական փոխանորդ Արքաթաղյան թեմի)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՇԻՐԻՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երկար տարիներ զբաղվել եմ ստուգ տեկուրություններ քաղելու համար մեր պատշճերից, պատմագիրներից, վիմական արանքագրություններից և պատմա-քանակական ուսումնասիրություններից, մեր հայպետների շիրիմների մասին:

Սամ «Էջմիածին» ամսագիր ընթերցողներ ու ուշադրության եմ ներկացնում սույն սումնասիրությունը: Հավակնություն չուն, որ իմ սույն աշխատանքը կիֆնի անթեր և ամրողական, որովհետև մինչև այժմ ակասում են տվյալներ 130 հայրապետներ՝ 22-ի շիրիմների մասին:

Մեր եկեղեցու առաջին, դարավոր ու աստմական կենտրոնը եղել է Մայր Աթոռ Էջմիածինը, կամ հայոց հին մայրաքարք՝ Վաղարշապատը:

Սակայն բոլոր հայրապետները չեն, որ ստել, գործել ու վախճանվել են Էջմիածնում: Անցյալում մեր քաղաքական կյանքի արիվայրությունների հետևանքով, փոխվել են և հայոց հայրապետության աթոռանիստ պրեերը: Որպես կանոն պետք է արձանագրել, որ հատել է ժամանակի հայոց թագավորը կամ թագավորության վերացումից հե-

տո երկրի քաղաքական գլուխը, այնուև էլ քաղաքական իշխանության կենտրոնում հաստատվել է հայրապետական Աթոռը:

Հայ մեր պատմիչների միաձայն վկայության, մեր հայրապետական առաջին աթոռանիստը եղել է Մայր Աթոռ և Էջմիածինը. «Եւ տեղիդ այդ եղիցի տուն ալօթից ամենայն հաւատացեց և Աթոռ քահանայապետութեան» (Ազգաթանգեղու):

Հայրապետական Աթոռը և Էջմիածնում մնացել է մինչև 5-րդ դարի 480-ական թվականները, և հասոց է հանդիսացել 15 կաթողիկոսների, և Գրիգորից մինչև Հովհանն Մահմակունին:

Այսուհետև հայրապետական Աթոռը, ըստ ժամանակի քաղաքական բերությունների, հաստատվել է հետևյալ վայրերում:

1. Դվին. 485 թվականին Հովհանն Մանդակունի կաթողիկոսը հայրապետական Աթոռը և Էջմիածնից փոխադրում է հայոց նոր մայրաքարքը՝ Դվին: Հայրապետական Աթոռը Դվինում մնում է մինչև 927 թվականը: Դվինը որպես հասոց ծառապում է 35 կաթողիկոսների:

2. Ջորավանք-Աղթամար. Հովհաննես և Դրասիանակերտոցի (պատմաբան) կաթո-

դիեսոր 927 թվին հայրապետական Աթոռը փոխադրում է Աղթամար, Արծրունի թագավորների հրավերով, որ Աթոռը մնում է մինչև 947 թվականը: Աղթամարում հասում են 5 կաթողիկոսներ, Դրասիանակերտցուց մինչև Անանիա Ս. Մոլացին (927—947):

3. Արդինա—Ս.Յիի մոտ, Ախուրյան գետի ափին: 947 թվականին Անանիա Ս. Մոլացի կաթողիկոսը այստեղ կառուցում է փառավոր հայրապետանոց և Աթոռը փոխադրում այստեղ:

4. Անք. Սարգիս Ա. Անանցու օրոք հայրապետական Աթոռը տեղափոխվում է Բագրատունիների մայրաքաղաքը 992 թվականին և 1045 թվականին Բագրատունիների թագավորության անկումով, ինչպես նաև 1064 թվականին Անիի գրավումով՝

5. Թավքը. 1062 թվականին Խաչիկ Բ. Անեցու օրոք և ապա Ծամելավ (Կիլիկիա) 1072 թվին Գրիգոր Բ. Վարդապետի օրոք:

Գրիգոր Գ. Պահճակունու օրոք հայրապետական Աթոռը փոխադրվում է՝

6. Ծովք (Դղյակ). 1116 թվականին և ապա

7. Հոռոմկա. դարձյալ Գրիգոր Պահճակունու օրոք 1149 թվականին:

1293 թվականին Հոռոմկայի մեմբրուների կողմից գրավումից և կործանումից հետո հայրապետական Աթոռը Գրիգոր Է. Անավարդեցու օրոք փոխադրվում է կիլիկան հայ թագավորության մայրաքաղաք՝ Սիս: Այստեղ հասում են շորջ 15 կաթողիկոսներ, մինչև 1441 թվականը:

1441 թվականին Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովի որոշումով երկար տարիների թափառումից հետո և մահավանդ Կիլիկիայում, նայ քաղաքական կամքի վերացումով, հայության ուշադրությունը կրկին կենտրոնանում է դեպի իր առաջին քաղաքական և կրոնական կենտրոն՝ Արարատյան դաշտը: 1441 թվին ընդմիշտ ս. Էջմիածնում է հաստատվում հայրապետական Աթոռը, որ և անշարժ մնում է ավելի քան 518 տարիներց ի վեր:

Ս. Էջմիածնուն է հանդիսացել ավելի քան 700 տարի հայրապետական արոռանիստ, որ հատել, գործել և մահացել են 58 Սմենացն Հայոց կաթողիկոսներ:

Սյմբ Եղրկապացնում ենք ս. Լուսավորչից սկսած հայոց հայրապետական շիրիմների մասին մեր քաղաք պատմական տեղեկությունների և ուսումնասիրությունների արդյունքները:

1. Ա. Գրիգոր Լուսավորիչ (302—325). Փալսոսու Բյուզանդ պատմիչը մեզ մահանան տեղեկություններ է տալիս ս. Գրիգորի մահին և թաղման մասին. «Մեծ քահանայական Գրիգորի (և Արփատակեանի) ու նր-

անց շիրիմների մասին... Արանց համար հանգստարաններ և արժամանիր շիրիմներ պատրաստվեցին—Սեծ Գրիգորի համար՝ «արանցայց զավառում—Թորդան կոչված զուղուում»:

Հովհաննես կաթողիկոս Դրասիանակերտցին Ծ դպրում անձանք շրջում է Սևապինի սրբավայրերը և համաստո նկարագրում է իր տեսածք. գնացի, ասու է, այն ս. այրը, որտեղ ս. կինն Մանի, և ապա երդիս երանյալ մեր Լուսավորիչն էր բնակվել. տևան այնուղի քարածամի խորքերում մի փորիկ փորվածք դժվարանուն դրվելով. նոր մեջ տեղունան մեղան կար պատրաստ համար. ապա գնացի կանգնեցաա այն քարի մոտ, որտեղ «մեր լուսավորության առթօք» երկու օր կանգնած պատուի էր ս. Մանի կորսի վախճանին... Օրենած նոր առա այն փող եկած դարակից, որի մեջ նովիկները ծածկել էին նոգեստ պատմական գանձը, նոր վրա արդեն իմ հրամանով մի քար ու կիր եկեղեցի էր շինված:

Պատմաբան կաթողիկության ավելի մասնաւուն է գրում ս. Գրիգոր Լուսավորչի վախճանան և թաղման մասին. «Բաց նովուու նատագայթն մեր սորքն Գրիգոր ամս բազմ կեցեալ քարին Մանեայ՝ վախճանի, անգիտաբար իմն թաղեալ ի նոխուաց իր գուեալ զնա ի կազ իմն աղքատաց: Իսկ ապա զիմին քազում ամաց գուան, զուրը մարմինն նորա Գանեֆի ուն զգնաուր առտածացին իմն գոզես տեսչութեամբ, և տարեալ զիմ զնա ի գեղու թորդան ցոր ի գրասնաց պարագիկանն»²:

«Լուսավորչի մաքրու նկարագրի բանելեն զիմերն մեկն այ երևան կուու իր մասնաւ պարագաներուն մեջ: Բասենցի Գանեֆի, ինքն այ մեկը այդ աշակերտներն, և անենցն ավելի հափշտամբիւմ իր վարդապետուու, եղալ պրատումի ծարավի անոր տեսության երազի և տեսիլի մեջ ան հաճախ կիվելեր սորքին ներկապությունը: Իր հափազգացումը վարդապետին մահվանը՝ օր մը տեսիլի մը հայտնությունը եղավ իրեն: Վազեց զգնարանն ճգնարան, հարցափորձեց նովիկները, և ի վերջու տեղեկացալ անոնցներ տխոր իրողությունը: Փութաց Մանյա այրը. վար առավ քարակությունը, դորս թերավ անկից պաշտելի մարմինը, և տարավ հանգչեցուց հայոց մեծ Լուսավորիչ Թորդան մեջ՝ նուզիչ անշրջությամբ և լուրջամբ: Ասիլս

¹ Փավառու Բյուզանդ, «Պատմություն նայոց», աշխատափորբամբ ափառեմիկոս Սո. Մալխանցիքի, Երևան, 1968, էջ 67:

² Հովհաննես կաթողիկոս Գրիգոր Պատմանակերտցու «Պատմություն նայոց», Թիֆլիս, 1912, էջ 41—42 (նու ապա Դրասիանամիկերտցի):

տեղի ունեցավ հավանաբար իր մահվան իսկ տարին, 326-ին:

Անշուր թաղումը, ասկայն, անշուր չթողուց իր հիշատակը: Հայաստանյաց եկեղեցին նշխարաց գիտի այս տոնն է, որ կրկատարք մեծահանդես, ասկեց զատ տարին երկու անգամ և պատվելով այդ հիշատակը՝ ժուտն ի Վիրապ և եղան ի Վիրապին տոներով:

Նշխարներեն մասնավորապես իր ս. Ա. Ջ. մեծ խնամքով կպահի ս. Եշմիածնի մեջ, Ս. մեծամասն Հայոց Հայրապետը անով է, որ կրկատարք ս. Միոնի օրինությունը»³:

2. Ս. Արիստակես (325—383).—Հաջորդում է նորը, մասնակցել է նիկիոն տիեզերական ժողովին, 325 թվին: Ս. Արիստակեսի թաղման վայրը Թիլ ավանն է. «Խակ հրա որդի սուրբ Արիստակեսին, իր խոստվանական մահից հետո, Ծոփաց գավառից տարան Եկեղեցաց գավառոր ու թաղեցին Թիլ ավանում, իր հայր Գրիգորի կարվաճրում»⁴: Այս մասին վկայում են նաև Մովսես Խորենացին և Դրասիանակերտցին: Խորենացին գրում է. «Նրանից հետո (ս. Գրիգորից—Վ. Ե. Տ.) (նստավ) Արիստակեսը յոթ տարի: Տրդատի քառասունյոթերորդ տարուց մինչև հիսուներեքերորդը, երբ տեղի ունեցավ Արիստակեսի մահը: Որովհետև նա խիկապես հոգեւոր սուր էր, ինչպես ասված է, ուստի նա թշնամի էր թվում բորոք անհրատ և աղտեղագործ մարդկանց: Ուստի Արքեղապոսը, որ Չորրորդ Հայքի վերակացու էր նշանակված, նրանից հանդիմանվելով, հարմար օրփան էր սպասում և Ծոփաց գավառում նրան ճանապարհին պատահերով, սրով սպասեց, իսկ ինքը փախազգ-գնաց Կիյիլիայի Տավրոս (լեռը), իսկ երանելու աշակերտները նրա մարմինը վերցնելով բերին Եկեղեցաց գավառու իր ավանում՝ Թիլում թաղելու»⁵:

Դրասիանակերտցին էլ նոյնն է վկայում. «Ապա քարձեալ զնշխարեալ մարմինն նորուն աշակերտացն՝ տարեալ հանգուցին յեկեղեցաց գաւառն ի Թիլն ատանի»⁶:

Հետագա ուսումնասիրուները, Հովհաննես եպիսկոպոս Շահմաթունաց, Օրմանյան, նոյնն են վկայում իրենց ուսումնասիրություններում, որ ս. Գրիգորն ու ս. Արիստակեսը թաղվել են Թիլ ավանում: «Իր գերեզմանը կգտնվեր Երիգայի Զովստակ-Հայրապետ կոչված վանքին մեջ: Համաշ-

խարիսխին պատերազմին՝ մեր բոլոր մյուս պատմական մենաստաններուն հետ՝ պա ալ զո՞ս գնաց ուրապատ ու քանդիչ ձեռքերու:

Հայաստանյաց եկեղեցին կտոնեն Արիստակես Հայրապետի հիշատակը՝ Լուսավորչի որդից և թոռանց հետ՝ Վարդակական վայրի կիրակիի նախընթաց շաբաթ օր»⁷:

3. Ս. Վրթանես Ս. Պարթև (388—341).—Լուսավորչի անդրանիկ որդին. հաշորդում է իր եղբայրը՝ Արիստակեսին 333-ին: Վահանավում է 79 տարեկանին և թաղվում Դարանայաց Թորդան ավանում, Լուսավորչի կողքին, իրենց տոհմական գերեզմանոցում, որի մասին վկացու են պատմիչները. «Մեռուավագանք անձնագիր հավաքվեց և մեծ արարողությամբ, սաղմուներով և հոգևոր երգերով, կանչելաներով, մոմերով, ամուշահու իննկով՝ արքունական կառքերով փոխադրեցին սուրբ Վրթանեսին, մեծ վշտով՝ որ որ մնացին իրենց ընիկ տիրոջից և հոգեվոր վարդապատից. և մեծ լացով ու կոծով և տրտմությամբ հողարկավորեցին Դարանայաց գավառի Թորդան գյուղը ու Գրիգոր մեծ հայրապետի մոտ նրա մարմինը՝ ամփոփեցին և նրա կենդանի մշտակատար հիշատակը կատարելով՝ ետ դարձան»⁸:

Նոյնին է վկայում նաև պատմաբան կարողիւրը. «Մեծն Վրթանես, լցեալ զկետ կենացն փոխի յաշխարին: աստի յաշխարին կենդանեալ, կալեալ զարոռն հայրապետութեան ամս հնագետասան: Եւ տարեալ հանգուցանեն զնա ընի հարս իր ի գիտն Թորդան»⁹:

«Իր մահվան սուզն ալ եղավ անկեղծ ու համաժողովրդական, թաղումը՝ մեծահանդես: Որբացածի խոր ու վշտահար գիտակցություն մը առաջնորդեց այդ թափորն ու դագաղը մինչև Դարանայաց Թորդան գյուղը՝ որ հանգչեցցոցին բազմերախտ հայրապետին համրութելի նշխարները, իսկ իր հիշատակը կենդանի մնաց ու կմնա սրտին այս մեծ ծողովորդին՝ որուն ծառակեց, և այս եկեղեցին՝ որուն լուսավոր ուահիմիրաներեն մեկը հանդիսացվա»¹⁰:

4. Ս. Հովհեկ Ս. Պարթև (341—347).—Վրթանեսի երկրորդ որդին, տղա հասակում ամուսնանում է Տիրան թագավորի՝ աղջկա նետ, և շատ երիտասարդ՝ կաթողիկոսանում:

³ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լուսն ի նայ», Ա. հատոր, Փարիզ, 1936, էջ 187:

⁴ Փավստոս Բյուզանդ, էջ 67:

⁵ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», աշխատաբուժամբ Ստ. Մալհապանցի, Երևան, 1961, էջ 257—258:

⁷ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լուսն ի նայ», Ա. հատոր, Փարիզ, 1936, էջ 246—247:

⁸ Փավստոս Բյուզանդ, էջ 87:

⁹ Դրասիանակերտցի, էջ 44:

¹⁰ Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի լուսն ի նայ», Ա. հատոր, Փարիզ, 1936, էջ 265:

⁶ Դրասիանակերտցի, էջ 41:

Ունենում է երկու գալակտիք՝ Պապ և Արքանացիներ: Հստ Խորենացու, Հուսիկի և Տիրամի հայամարտությամ շարժադիրը եղած պիտի լինի Հովհանոս Ուրացողի պատկերը, որը իր թե Տիրամ թագավորը ցանկացել էր եկեղեցու մեջ դնել, իսկ Հուսիկի կաթողիկոսը կոփառութեղի մերժում է: Տիրամը Հուսիկին բրածեծ անելով պահուում է 347 թվին, Ծոփաց Բնաքել քաղաքում, հիսուն և երկու տարեկանին: Հուսիկն էլ բաղվում է Դարանացյա գալակտիք Թորդան ավանում: «Աստծո քահանայապետ սուրբ և երանելի մանուկ Հուսիկը բրածեծ լինելով, չախչախսկած, խոշտանցքած, կիսամահ զցվեց մնաց: Նրան վերցրին արքունական եկեղեցու պաշտոնաները Մեծ Ծոփիք գալակտիք արքունի Բնաքել բերդից բերին-հասցրին Դարանացյա գալակտիք Թորդան զցուլը, որտեղ թիշ ժամանակ անց վախճանվեց ու թալվեց Գրիգորի և իր հայրերի մոտ»¹¹:

Այս հարցի մասին նույնն է վկացում հան Խորենացին: «Սուրբ Հուսիկի մարմինը վերցրին տարան իր հոր մոտ, Թորդան զցուլը»¹²: Դրասիսանակերտցին «Խսկ զմարմին սրբյ Յուսիկն տարեալ դնեն ընդ հարս իր ի գիղն Թորդան. որ եկաց ի հայրապետութեան անու ամս վեց»¹³:

Հայ եկեղեցին Հուսիկ կաթողիկոսին և դպակ է սրբերի շարքին: Նրա սունը կատարվում է Լուսավորչի որդվոց և թոռանց հիշատակի հետ:

5. Փառեն Ա. Աշտիշատցի (348—352).— Տարոն գալակտիք, ս. Հովհաննես Կարապետի վանքի միաբաններից: Կարճ ժամանակ է վարուն հայրապետական գործերը և «Ապա նա վախճանվեց, հայրերի մոտ զընաց: Եկեղեցու պահապետների խումբը հրա մարմինը վերցրեց, տարավ Տարոն գալակտը, Հովհաննեսի մեծ մարգարեանցի պաքարակը, որտեղ ինքը հախապես ապրում էր կենդանի ժամանակ, և այսուղեւ նրա մարմինը թաղեցին ու գեղեցիկ շիրիմ շինեցին վըրան»¹⁴:

6. Ա. Ներսէս Ա. Պարքը (353—373).— Ներսէս մեծ հայրապետը Աթանացիների որդին էր, Հուսիկ կաթողիկոսի թոռը: Ա. Ներսէսը գումարում է 364—365 թթ. Աշտիշատցի ժողովը, որտեղ կանոնները են սահմանվուն ընտանեկան կանքի սրբության, բարեգործական հիմնարկությունների հաստատման վերաբերյալ: Հանդիսանալով Զիրավի հակատանրությունը՝ Հայ ազգային եկեղեցական պատմության մեջ ս. Ներսէսը

նշանակալի է իրեւ «նախապատրաստող հայրական ինքնազարդումի և քրիստոնեական վերածնության մեծ գործին», որը իրականանում է ս. Սահմակի և ս. Սևարոսի օրոք:

Լուսավորչի տան ապս նոյակաս անձնափորիցնը քաղվել է իր նախորդների կողմբն: «Երանելի Ներսէս ապս աշխարհից փոխաց Եկեղեց գալակտուս, Խախ կոչված գուղուս: Պապ թագավորը նրա մարմինը վերցրեց, տարավ թաղեց Թիլ ավանուս»¹⁵:

Այս մասին Փափստոսը նույնը հնատատելով հանդերձ, գրում է. «Եվ Աստծո մարդու սուրբ Ներսէսի, մարմինը վերցրին եկեղեցու պահապետները և Փափստոս եպիսկոպոսը, պաշտոնյաների զիսավոր Տրդատը և Հայոց Սուշեղ սպարապետը ու Հայր մարտիւտը և արքունական բանակի տիրող ազնվականների գունդը: Մարմինը վերցրին Խախ ավանից, որտեղ պահույթուննը կատարվեց, և տարան իր գուղը՝ Թիլ ավանը: Մրցին հուղարկավորեցին սաղմունարով, օրմնաբարեներով, վասված կանոններով, հանդիսավոր պաշտամունքով և շատ հիշատարություններով: Բայց մինչ սրբի մարմինը դեռ չէր թաղված, ինը՝ Պապ թագավորը, եկավ, մարմինը պատեց և մարտիրոսական դարբարական թաղեց»¹⁶: «Թաղեկին զնա ի Թիլ ատակի»¹⁷:

Հայոց հայրապետների հաջորդականությունը պահպաներու համար առենք, որ ս. Ներսէսին հաջորդում էն:

7. Շահակ Ա. Մանազկերտցին (373—377):

8. Զավեն Ա. Մանազկերտցին (377—381):

9. Ասպորակես Ա. Մանազկերտցի (381—386):

Այս երեք մանազկերտցի կարողիկուների շիրմիների մասին Օրմանյան սրբազնը գրում է. «Մրանը երեքն էլ թաղված են Մանազկերտում»¹⁸:

10. Ա. Սահմակ Ա. Պարքը (386—439).— Որդին էր Մեծն Ներսէս Պարքին: Ծնվել է 348 թվին: Խախական և բարձրագույն կրթությունը ստացել է Կեսարիապում և Բյուզանդիայում: Մեծ է նրա դերը հայ գրավոր գրականության ստեղծման և Աստվածաշնչի և այլ գործերի թարգմանությունների կատարման մեջ, կրթության տարածման և դպրոցների հաստատման ասպարեզում:

15 Մովսէս Խորենացի, էջ 306:

16 Փափստոս Բյուզանդ, էջ 259:

17 Հովհաննես Գրավանակերտցի, էջ 51:

18 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, «Ազգապատում», մասն Ա., Կ. Պոլիս, 1912, էջ 237, 243, 249, 250: (Հետ այսու «Ազգապատում»):

11 Փափստոս Բյուզանդ, էջ 90:

12 Մովսէս Խորենացի, էջ 278:

13 Դրասիսանակերտցի, էջ 45:

14 Փափստոս Բյուզանդ, էջ 101—102:

Ս. Սահմակն իր արդյունաշատ կլանքը կնքեց 439 թվին, սեպտեմբերին Բագրևանդի Բյուր գյուղում, 51 տարի հայրապետությունը փարելուց հետո:

Ս. Սահմակի մահվան և թաղման մասին մահրամասն գրում է Կորյունը. «Երանելի Սահմակ... Բլոցաց գյուղում (Էր) Նավասարդ ամսի վերջում, երբ և երանելիի ծննդյան օրն էին հիշում, ծերութիւն օրվա երկրորդ ժամին, անուշանու տուիլ պաշտամունքի ժամանակ աստվածանոն աղոթքներով (հոգին) Քրիստոսին ալվանդեց... Ծուսով ամենայն պատրաստությամբ վերցրին Երան իր ձեռնատուն աստվածաներ պաշտոնակները, որոնց գլխավորի անունը Երեմիա էր, մի տորք և բարեպաշտ մարդ, Դուար անունով մի աստվածաներ հշխանակնոց հետ, որ վերևում հիշածն Վարդանի կինն էր, այլ և ծողովկած սրբերի մեծ բազմությունը: Վերցրին սրբին սաղմունելորով և օրինությամբ ու հոգելոր երգերով, օր ու գիշեր (գնալով) քիչ օրերից հետո հասցրին Տարոն մինչև բուն իսկ Աշտիշատ գյուղը: Եվ այնուեղ մարտիրոսական խորանում դրին (Երան) սրբի տապանին մեջ ամեն անուշանու խնկերով ու կնքեցին քրիստոսական կերով և օրինավոր հիշատակը վրան կատարեցին, այնուեւու դարձան յորաքանչյուրն իր տեղը: Նրանք տարեցտարի հավաքվելով նոյն ամսին՝ նրա հիշատակի տոնախմբությունն են անում»¹⁹:

Նոյնին է վկայում Խորենացին. «Տարան թաղեցին իրենց Աշտիշատ գյուղում, որ գտնվում է Տարոն գավառում»²⁰: Դու Դրասանակերտցին. «Սաք և սորբն Սահմակ հիտանդացեալ հիտանդութիւն մեծ՝ առ Քրիստո վերափոխի և Բագրատն գաւառի ի Բյուրոն կոչեցեալ գիտ, որ զանմարմնոցն ինքեան բերեալ զվարս՝ ի մահկանացու մարմնի զանմահն թողոյր լիր լիշտակի բարոյ»²¹:

Գարեգին եպիսկոպոս Խաչատորյանը ականատեսի վկարություններով ու. Սահմակի շիրմատեղի մասին գրում է. «Այդ զերեզմանի վրա հետո շիրմեցալ նաև «Մեծապայծան» եկեղեցի մը: Աշտիշատ դարձավ նոր ուստավայր մը՝ կրելով իր մեջ սրբազն աճյուններն երախտավոր հայրենասերին, աճուգական հայրապետին, և ազգային-եկեղեցական վերածնունդի մեծագոյն ուահվիրաներն մեկուն: Ունեցավ նաև իր ուխտի և հիշտակի օքը»²²:

¹⁹ Կորյուն, «Էլարք Մաշտոցի» աշխատաիրությամբ Ս. Աքելյանի, Երևան, 1962, էջ 125—126:

²⁰ Մովսես Խորենացի, էջ 348—350:

²¹ Դրասանակերտցի, էջ 57:

²² Գարեգին եպիսկոպոս Տրապիզոնի, «Աշխարհի

11. Ս. Հովսեփ Ս. Հողոցմեցի (448—454).—Հողոցմաց գալստի Վայոց ձոր գյուղից, Սահմակ-Սեսրովյան առաջին դասի աշակերտներից: Նահատակվում է Վարդանանց պատերազմից հետո, 454 թվին, իր վեց ընկերակիցների հետ, Դենշապուի ամբարավետի կարգադրությամբ, Ապար աշխարհի Նյուշապուի քաղաքից բավական մեռու, Ռևան գյուղի նոտերքը, անապատ և քարքարոտ վարում, չարաշար տանշանելերից հետո. «Կատարի վկայական մասուամբ հանդերձ ընկերակցութեան անդ ի Պարսկաստան լապար աշխարհի, յամի 454, ի քանին հինգերորդ ավոր հրոտից ամսոյն այն է ի 31 լույսի»²³:

12. Մելիտե Ս. Մանազկերտցի (454—456):

13. Մովսես Ս. Մանազկերտցի (456—461).—Մեր մատենագիտական աղբյուրների մեջ այս երկու կաթողիկոսների մահվան և թաղման մասին ոչ մի վկարություն չենք գտնում: Հավանաբար սրանք ել թաղվել են Մանազկերտում:

14. Գյուտ Ա. Արամենացի (461—478).—Տայոց աշխարհի Արամեաց գյուղից էր. աշակերտ Ղևոնյանց, ապա եպիսկոպոս Մամիկոնյանց: Տեսնելով պարսկական կրոնի տարածումը ուրացյալ նախարարների ձեռքով, որոցեց ապստամբել պարսիկների դեմ և սրա համար երկու անգամ պատզամավոր ուղարկեց Լոռն կայսեր (457—477): Գաղիշը Խորխոռունու ամբատանությամբ կանչվեց Պարսկաստան 471 թ. և զրկվեց իշխանությունից: Դարձավ Հայաստան 472 թ. և ստանձնացավ Վահանը գավառի Ութմու գյուղը, որ և վախճանվեց խոր ծերության հասկում 478 թ. և թաղվեց «ի դիրս հարց իրեանց. խաղաղութեամբ ըստ Աստուծոյ հաճոյիցն, օրինեալ ամենեքեան ի բերանոյ սորբ կաթողիկոսին Գիւտալ»²⁴: Օրմանյան սրբազնը Փարպեցու սույն տեղեկությունը մենաբանում է հետևյալ կերպով. «...որ ավելի քան հայրենական դամբանի, պարզապես «յաելեաւ առ հարս իր» բացատրության իմաստն ունենալ կերպի»²⁵: «Առնու զվախճան յաստի կենաց որոյ և զմարմինն ամփոփեն ի գիտն Ութմու գասա-

լուս ի հայս», հասոր Բ, Բունակ-Այրես, 1939, էջ 74:

²³ Հովհաննես եպիսկոպոս Շահմարտունյանց, «Սոուրագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հիմգ գաւառաց Արքարատաց», Էջմիածնին, 1842, նատ. Ս, էջ 179 (նետ այսու Շահմարտունյանց):

²⁴ Պապար Փարպեցի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1907, էջ 241:

²⁵ «Ազգապատում», մասն Ս, էջ 435:

ոին Վանանդայ ի դիրս հանգստեան հարց նորա»²⁵:

15. Հովհաննես Ս. Մանդակունի (478—490).—Արշակունյաց գալստի Ծախուացունիցից էք. ժամանակակից Վահան Մամիկոնյանի, որի ապստամբական կոփիներին էլ մասնակից եղավ: Վիրավորվեց Խորովակերտի պատերազմուն: Խըբն է նիմոնել Տեկորի տաճարը:

Սեր նին առջարներում որևէ նիշատակություն չկա Մանդակունու շիրմի մասին: Թաղվել է, ըստ Հ. Մ. Զամշյանի, Շիրակի կամ Վահանդի Բենու գյուղը. «Երանելի


²⁵ Չահիսարունյանց, Ստորագրութիւն, նատ. Ա. էջ 180:

Յովհան Մանդակունի յետ բազում սրբութեամբ կատարելոյ զպաշտու զիր՝ կացեալ ի կաթողիկոսութեան ամս զ. ամիս ինչ, վոյսեցաւ առ տեր .. և բաղեցաւ ի զիրն Բենու, ի Շիրակ գաւառի»²⁷: Հ. Մ. Զամշյանին նետելելով, Ծահիսարունյան սրբածն և նաստառում է, որ Մանդակունին թաղվել է Բենու գյուղում. «Յես վաստակելոյ բազում յեկեղեցի Աստուծոյ՝ վախճանի և դնի մարմինն ի տապաճի ի զիրն Բենու՝ որ ի Շիրակ գաւառի»²⁸:

(Չարունակելի)

²⁷ Հ. Մ. Զամշյան, «Հայոց պատմութիւն», Վանեսիկ, 1785, նատ. Բ, էջ 218:

²⁸ Չահիսարունյանց, նատ. Ա, էջ 181:



ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ
(Բանասիրական գիտությունների դոկտոր)

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԾԱՐԱԿԱՆԱՆԵՐԸ

Հայոց պատմության հիմնադիրն ու քեր-
ռողակացը ծնվել է մոտավորապես 410—
415 թվականներին, Տարոն գալաքի Խորոն
գոյուում: Համարվում է մեկը Սահմակ-Մես-
րոպի կրտսեր աշակերտներից և եղբայրը՝
Մամբրե վերծանողի:

Պատման մեջ կատարելագործվելու համար
ստվորել է Բյուզանդիական, Աթենքում, Պա-
ղեստինում, Ալեքսանդրիականում: Հայաստան
վերաբանապուր հետո նշանակվել է Բագ-
րեվանի և Արշարունաց եպիսկոպոս: Ժա-
մանակի սահմանափակ որոշ հոգևորական-
ների կողմից ներարկվել է հայածանքի:
Թաղված է Մշո գավառի և Առաքելոց վան-
քում: Մահացել է շորջ 490-ական թվական-
ներին: Թողել է հարուստ պատմագրական
ժառանգություն՝ «Պատմութիւն հայոց»,
«Պատմութիւն պատկերի Տիրամօր», «Պատ-
մութիւն և ներքողեան Հոփիսիմեաց»,
«Դիրք Պիտոյից», «Ծառ վարդավանի»,
«Մեկնութիւն քերականի», զանազան թրդ-
թեր, ճառեր և շարականներ:

* * *

Հինգերորդ դարի հայ շարականագիրների
մեջ Մ. Մաշտոցից հետո Խորենացին երկ-
րորդ նշանավոր հեղինակն է համարվում:
Ըստ ձեռագրերի, նոր փաստերի և բանա-
սիրական հորագույն հետազոտությունների
Մ. Խորենացին գրել է տերունական տոների
հետևյալ կանոնները.

Սատվածահայութնության և Ավելայաց կա-
նոններում հետևյալ օրինությունները՝ «Ու-
րախացից Սրբութի», «Խորհուրդ մեծ և
սրանչելի», «Այսօր Բանն ի Հօրէ», «Էակից
Հօր և Հոգուն», «Այսօր Գարրիկ ցնծո-
թեամբ», «Այսօր որ յաթոռ փառաց», «Ան-
սկզբանական տեսիլ», «Անեղանելի բնու-
թիւն», «Էլոյ ի լուսոյ», և «Այսօր ցընծան եր-
կինք» պարականն շարականը:

Մենցան կանոններում Խորենացին ունի
միայն երեք Հարց, որից երկուսը կանոնա-
կան՝ «Որ դասոց երկնաւրաց», «Անը-
կիզբն Էակից Բանդ Հօր» և պարականունը՝
«Ուրախ լեռ Մարիամ, սուրբ Աստուածա-
ծին»: Այս կանոններում Խորենացին գրել է
հետևյալ 12 Մեծացուցէները՝ «Անարատ
կոյս», «Աստուածածին Մայր լուսոյ», «Ու-
րախացիր Աստուածածին», «Անթառամ ծա-
ռիկ», «Աստուածածին սովոր կոյս», «Զքեզ
Աստուածածին», «Զքեզ կոյս և մայր»,
«Աստուածածին սրբութի», «Զքեզ մայր կո-
սովթեան», «Էլոյ ի լուսոյ, մայր և կենա-
րար», «Որ զանառելին ծնար» և «Սիւն լո-
սոյ և ամպ նովանի», 6 Ողորմեաներ՝ «Զա-

Հարակնոցի առաջարանում գրված է.
«Մովսես Քերթողը՝ զԾննդեան, զՄեծա-
ցուցէքն, զՏեսողնդառաջին, զփոխման ա-
ռաջին պատկերն, այլ զկարգն Յարութեան
սոր է ասացեալ...»¹:

¹ Շարակնոց, Երասական, 1936, էջ 5:

նայր բարբառու վերնոցն», «Որ կերպարան Հօր», «Չքեզ աղաշեմք», «Որ էրն ի սլըզ-րանէ», «Հրաշափառ ծնունդ» և «Խոնարհեցար ի բարձանց»; 1 Մանկոնք՝ «Ծագումն իրաշաղի»:

Տեանձնադաշի կանոնում Մ. Խորենացուն ևն պատկանում «Մարմնացեալ ի կուսէն» և «Ալսօր ի տաճարն եկիր» օրինուրութեանը, «Օրինեալ զքեզ» Հարցը (իր գործատնով), «Ալթոն քրովեալան» Մեծացուցեն, «Որոյ առեալ» և «Չոր փառարանն» Տերմերկանցեանը և «Անսկիզբն Բանն ի Հօրէ» Ծաշու շարականը:

Վերափոխման կանոնում (առաջի պատկեր) ունի «Ալսօր ժողովեալ պրբոցն» օրինուրութեանը, «Որ զնախամօրն» Հարցը (իր գործատնով), «Խորանապակ կանարանընման» Մեծացուցեն, «Որ ունիս իշխանութիւն» Ողորմեան և «Անսկիզբն Աստուած» Տերմերկանցը:

Այսպիսով, Ծննդյան կանոններում Խորենացին ունի 33, Տառելնադաշում 7 և Վերափոխման կանոնում 5 շարական, ընդամենը՝ 45, որից՝ 14 Օրինութիւն, 5 Հարց, 14 Մեծացուցեն, 7 Ողորմյա, 3 Տերմերկանց, մեկ Մանկոնք և մեկ Ծաշու:

Մ. Խորենացու գրած բազմաթիվ շարականների մեջ, իրենց քնարականուրությամբ, բախով ու չերմուրյամբ աշքի ևն ընկնում Ծննդյան կանոնի Օրինություններու ու Մեծացուցեանը:

Նախ ծանոթանանք Քրիստոսի ծննդյան կանոնում Ավետյաց տոնին նվիրված շարականներին: Հայ բանատեղի՝ հրեշտակի՝ Մարիամին ավետելը մի «անձառ խորհուրդ» է, որը մինչև այդ ծածոկ է մնացել «յազգաց և յափունից»: Գարքիել հրեշտակասեւը նայտնում է Մարիամին աստվածային խորհուրդը՝ թե

«Անտանելին ի համայնք, բովանդակիշ թնորթեանց բոլորից,

Պարագի այսօր մարդասիրապէս յորովացնի անսարա կուսին»²:

Եթէ Մարիամի ծննդյան շարականներում զանազան որոշչներով ու այլարանուրությամբ գծագրվում է կոյսի և աստվածամբ պատկերը, նոյն ձևերով ու եղանակներով էլ այս տեղ Խորենացին քնութագրում է Քրիստոսին և Հայ մարդուրության խորհուրդը: Հայ այս օրինության, Քրիստոսի մարդուրության նպատակն է՝ փրկել տիեզերքը, լուծել Ադամի մեղքերը և կատարել ս. Գորի կանիսագուշակումները:

«Ուրախացիր պրուին Գարքիելի աւետոք» օրինության մեջ, քնարական մոտիվների մեջ աստվածաբանական գաղափար-

ներ էլ են դրսուրվել, բանի որ դրանք շատ սերտ առնչված են Փրկչի մարդուրության խորհրդի և շարականի նյութի մետ: Շարականի մեջ պարզ երկում է նաև ինքը՝ բանատեղծը իր վերաբերմունքով ու չերմ զգացնումներով: Նա այնպէս է խոսով Մարիամի մետ, որը կարծես ննրկան է, և բանատեղծը ոսղակի կենդանի զրոյց է ունենում նրա մետ:

«Ողջոյն ընդ քեզ Մարիամ, ի քեզ սուրբ Հոգին եկեացէ...»³:

Ամբողջ Օրինությունը նորդում է որախությամբ ու բերկությամբ,

«Ուրախացիր, սրբուին, Գարքիելի աւետոք...»

Ուրախ լեր բերկրեալ, դուռը կնքեալ... Ուրախացիր Սստուածին՝ վերօրինեալդ ի Սրբովելից»⁴:

Այս ուրախ մոտիվներից մետ սկսվում է ս. Երրորդուրության փառաբանուրությունը՝ ինչպէս մեր շարականներից շատերում: Փառաբանական տրամադրությունն ունեղ է արտահայտվել այդ կանոնի «օրինեալ զքեզ» բառերով սկսվող Տերմերկանցից շարականում պայտեալ:

«Օրինեալ զքեզ Աստուած...

Գոյլամք զքեզ Միածին...

Բարեկրանեամբ սուրբ զՀոգիդ...»⁵:

Փառաբանուրությունից մետ զայիս են երկրպագության և խնդրաներների տողերը.

«Անկանիմք առաջի ք Աստուածին, եւ աղաշեմք զանարա զկոյսդ...»⁶:

Իսկ ինչի մասին են շարականագրի խնդրաներները: Այսուղ արդեն Տիրամայրը պիտի բարեկտոսի Փրկչի առաջ, որպեսզի առօրյա կանքում գոյություն ունեցող բոլոր փորձություններից և վտանգներից մարդկությունը մետու մնա.

«Փրկել զմեզ ի փորձութենէն, եւ ամենայն վտանգից մերոց...»⁷:

Ինչպէս Աստվածածին ծննդյան և Ավետյաց տոների, այնպէս էլ Քրիստոսի ծննդյան տոնի առթիվ գրված ստացին օրերի շարականները սկսվում են ս. Խորենացու գրած օրինություններով: Վերջիններին մեջ ամենաշատապիրը և ծոլովրդի մեջ ամենասուրածվածը «Խորհուրդ մեծ և սրանչելի» շարականն է, որն երգվում է ոչ միայն եկեղե-

³ Անդ, էջ 32:

⁴ Անդ, էջ 32—34:

⁵ Անդ, էջ 35:

⁶ Անդ:

⁷ Անդ:

ցում, այլն եկեղեցոց դուրս՝ հանդեսներում և Ծննդի առջիկ տները շրջող՝ «Ավետիս» երգու սպատակների կողմից:

Անս այդ երգից մի քանի տող.

«Խորհուրդ մեծ և սրբանչելի,
Որ յայս առուր յայտնեցաւ,
Հովհիքն երգեն ընդ հրեշտակու՝
Տան աւետիս աշխարհին»⁸:

Բահաստեղծը ամենից շատ ինքն է հիացած այդ մեծ խորհրդով: Ինքն էլ հովհիքների ու հրեշտակների նետ երգում է Քրիստոսի ծնունդը և ավետիս է տալիս աշխարհին, թե՝

«Ծնաւ նոր արքա ի Բեթղեհեմ քաղաքի,
Որդիք մարդկան օրինեցէք՝
Չի վասն մեր մարմնացաւ»⁹:

Այս «Անրովանդակալին», որին չեն կարողել պարփակել երկինքն ու երկրը, այսօր համեստորեն տեղավորվել է միայն մի այրի ու մսուրի մեջ: Անս դրա համար էլ

«Այսօր ցնան երկինք ի վերուստ՝
Մեծապայծառ անտեօր»¹⁰:

Քրիստոսի ծննդյան առիթով հրեղենների բազմությունը երկնքի իշել է երկիր, մի կողմից իրենք՝ երկնային բնակիչներն էլ են զարմացած, իսկ մյուս կողմից էլ ավետիս նետ տալիս աշխարհին: Հովհիքներն էլ իրենց ներթին են փառարանում նորածին Փքրկ-շին.

«Այսօր հովհուացըն տեսեալ,
Զարդարութեան արեական,
Եվ ընդ հրեշտակու երգին՝
Փառ ի բարձուն Աստուծոյ»¹¹:

Ծննդյան երկրորդ օրվա Օրինությունը նույնպես փառարանական, ներբողական կողմերի նետ միասին ունի նաև դավանարանական մոտիվներ: Այժմ էլ Քրիստոսի ծնունդը այլ պատկերներով ու այլարանությամբ է խորհրդավորում: Փրկչի ծնունդն այստեղ համարվում է «Բանն ի Հօրէ անկրկնելի խորհուրդ»: Այդ «Բանն» անցնելով կուսական որովանից, նոր է հայտնվուն աշխարհին ու մարդկանց: Շարականագիրը Քրիստոսին համարում է «Մանուկ անձմանակ», ծնած «անսերմն ի կուտ» և այլն: Երեսուն տարի հետո Փրկչի մկրտվում է Հորդանանի ջրերում, Հովհաննես Մկրտչի ձեռքով և դրանով մաքրում մարդկության դարավոր մեղքերը.

⁸ Անդ, Էջ 38:

⁹ Անդ:

¹⁰ Անդ:

¹¹ Անդ, Էջ 39:

«Որ մաքրեացըն զՅորդանան,
Եւ լրաց զմեղս աշխարհի,
Զոր օրինեն անդադար արարածք ամենայն,

Զէակիցըն Հօր և Հոգուց»¹²:

Դավանարանական և փառարանական մոտիվները գլխավորապես Օրինության առաջին մասում են: Երկրորդ մասում բանաստեղծը զանազան համեմատությամբ և պատկերներով բացատրում է փրկագրծությունը, որպես Լուսավորիչ և Փրկիչ: Այս առումով էլ նա Հիսուսին համեմատում է արեգակի հետ.

«Լոյս ի լուսոյ ծագեալ ի Հօրէ,
Եւ լուսարուեաց զգտիեզերս,
Ծնունդ անապական, անըստուեր լուսոյն,
Զոր միշտ փառարուեն դասք անմարմուցն»¹³:

Այդ Փրկիչը ծննդում է Բեթղեհեմի բարյուներից մելում: Հովհիքներն ու մողերը աստղերի ցուցումով գալիս, գտնում են նորածին Փրկչին՝ մսուրում, խանձարություն փաթաթված: Հովհիքները երկրպագում են նորածին: Սակայն, ըստ շարականի, աշխարհի ու մարդկանց մեջ, նույնիսկ երկնային արարածներից էլ ավելի պիտի խնդա և ուրախ լինի ինքը՝ «լուսոյ մայրը» Մարիամը:

«Խնդա և ուրախ լեր, անհարսնացեալ Մարիամ,
Քանիք որ ի քէն ծնաւ Փրկիչ,
Տէր և Օծեալ ի քաղաքի Դատիք,
Զոր միշտ փառարուեն դասք երշանիկ նոյնուացն»¹⁴:

Երկրորդ օրվա Մեծացուցեն նորից Տիրամոր փառարանությունն է՝ լուս պատկերներով ու համեմատություններով.

«Լոյս լուսոյ մայր և կենարար Բանին
բնակարան,
Լոյս ծագեցա ի քէն նատելցու ի խաւարի...»¹⁵:

Միաժամանակ Մարիամը ոչ միայն լուսի, այլև ստեղծողի մայրն է, որի համար բոլոր ազգերն ու ցեղերը բախտավոր են համարում նրան և երանի տալիս.

«Մտեղծողին մայր և հնութեան կերպի նորոգողին՝
Քեզ երանեն ազգ և ազինք ամենայն...»¹⁶:

¹² Անդ, Էջ 43:

¹³ Անդ:

¹⁴ Անդ, Էջ 44:

¹⁵ Անդ, Էջ 45:

¹⁶ Անդ:

Ըստ այդ կանոնի Տերմերկմիցի՝ «Դասր անմարմանականը» երկնավոր գործերն ու հոմիլիները բերդենում բարպարի դռանն իրար միացած՝

«Օրինեն զծագումն լրաց մեծին ի
Հօրէ»... իսկ մոգերը
«Աստեղը նշանա եկին ի Բեթղեհեմ,
Երկրպագին Տեան,
Եւ ի յարին մատուցին զընծայս խորհըր-
դոյն...»¹⁷:

Այստեղ, մի որիշ Մեծացուցին մեջ Տիրամորք հատկացված ստորոգելիները նրան հասցնում են մեծարանիք գագաթնակետին. Մարիամը համարվում է՝

«Ամենագույնի և քան զերկինս բարձրա-
գոյն»,
Երկնայինների մեջ էլ համարվում է՝
«Ամենապայծառ, բերկրեալ միշտ կոյս»¹⁸:
Վերշին տան մեջ հեղինակը Տիրամորք

այլաբանորեն կապում է Դամեկը մարգարեի հայացուշակումներից մեկի հետ.

«Ի լեռնէ վէմն՝ առանց ձեռին հաստեալ,
Դամիկը գուշակեաց զանսերմն զծունիդ
քո,
Հարսն երկնաւոր, մայր հետ ծննդեան
մնապով կոյս,
Վասն որոյ ամեններեան զքեզ միշտ մե-
ծացուցաննեմք»¹⁹:

Հետևալ կանոնի, «Էւակից Հօր» օրինու-
թյունը, քան էության նոյնակես դավանա-
բանական է: Խորենացու ժամանակ դավա-
նաբանական հարցերը ուժեղ էին արծարծ-
վում, հոգող խեղիներ էին: Դրանք կապ-
ված էին միաբնակության և երկբնակության
դավանական վեճերի հետ: Մ. Խորենացու
գործ Ծննդյան կանոնների շարականներում
հաճախ են շոշափվում այդ բնույթի հարցե-
րը:

Ծննդյան երրորդ օրվա կանոնի օրինու-
թյան մեջ Քրիստոսը համարվում է.

«Էւակից Հօր և Հոգուն, անսկիզբն Որդի.
Անմայր յառաջնումն անդրանիկ,
Եւ ընդ Հօր յախտեան...»²⁰:

«Սրանչելագործ Աստուած» Հարցի մեջ
ցոյց է տրվում Փրկչի ուժը, մեծությունը և
փառքը, Նա նասում է բրովերական աթոռը,
վեցթևան սրովերը չեն համարձակվում
հայել Նրա աստվածային տեսքին, մինչդեռ
այսօր Նա «որում ոչ բանեն երկինք ընդու-
նի զանբակի բնութիւն» կարողացաւ տե-

ղավորվել կնոց արգանդում և գրկում: Ավել-
ին, այսօր ծննդել է մի այնպիսի «քազառոր...
յորով, դրան խմանալի գօրորիների»²¹: Մե-
ծացուցեի մեջ Մարիամը մածարվում է որ-
պէս «անհարսնացեալ մայր», «անսպական
տաճար», «ասպասու լրաց» և այլն: Ամե-
նազարմանալին այն է,—ասում է հեղինա-
կը,—թէ:

«Հորը կենդանի որ ի մորենին վառեցաւ,
Չոր ամվաս արգանդի քուս կրեցեր,
Եւ ծնար Աստուած և մարդ»²²:

Չորրորդ օրվա կանոնը նոյն թեմաներով
է համակված: Գաբրիել հրեշտակապետը
ուրախ երգելով սուր կոյսին հաստում է
երկնայինի ավետիսը: Մոգերը նետելով
աստեղի ցոյց տված նշաններին, գալիս,
գտնում են նորածին Փրկչին և երկրպագում:
Քրիստոսի ծննդը համարվում է տիեզերա-
կան երևոյթ».

«Այսու տիեզերը պայծառացան,
Անեսոք սրբոյ կոսին,
Քանզի Բանն մարմին եղաւ,
Եւ բնակեաց ի մեզ»²³:

Ասունձնապես գեղեցիկ ու բնարական է
այս կանոնի նետելով Մեծացուցեն, որտեղ
շարականագիրը դիմելով Մարիամին, ասում
է:

«...Դո՞ւ՝ պարծանք կոտորեան մարդկան,
Դո՞ւ՝ որախորթին հրեշտակաց,
Դո՞ւ՝ բարձող անհիծից»:
Դո՞ւ ճշմարիս արևելք՝
Սրեգական արդարութեան,
Յորմ, ծագեաց
Փրկութիւն տիեզերաց,
Միաբանական ձայնի երգով մեծացուց-
նեմք»²⁴:

Հինգերորդ օրվա կանոնի Մեծացուցեն
առանձնապես վերշին տան մեջ մի քանի
տողով հակիրճ ամփոփված է, թէ ի՞նչ դեռ
է խաղացել Աստվածածինը մարդկությանը
փրկելու գործում: Հեղինակը դիմելով Տիրա-
մորը ասում է.

«Քե լուծան կնիք դատապարտութեան,
Եւ քե կանգնեցաւ մեղուցեալ մայրն գլոր-
եալ...»²⁵:

Այսպիսի բնույթ է կրուս նաև յոթերորդ
օրվա կանոնի «Սիւ լրտու» Մեծացուցեն: Փատարանիոյ Տիրամորը ընորոշող բոլոր
պատկերներն այստեղ վերցված են բնությու-

²¹ Անդ, Էջ 48:

²² Անդ, Էջ 50:

²³ Անդ, Էջ 54:

²⁴ Անդ, Էջ 55:

²⁵ Անդ, Էջ 61:

¹⁷ Անդ, Էջ 45—46:

¹⁸ Անդ, Էջ 47:

¹⁹ Անդ, Էջ 47:

²⁰ Անդ, Էջ 48:

նից, այս տեսակետից էլ ութ օրվա բոլոր կանոններում եղած բազմաթիվ Մեծացուցեներից սա ամենագեղեցիկն ու պատկերավորն է:

Սուաշին տաճ մեջ Մարիամը համարվում է՝

«Միևնույն և ամպ հովանի սուրբ կոյս, Ձողեցեր ի մեզ զցողն երկնալին»²⁶:

Երկրորդ տնօւմ՝

«Անկեր մորենի և սրովք հողեղին սուրբ կոյս, Քանզի պտուղն կենաց ի քէն տուա մեզ»²⁷:

Վերջին տաճ մեջ Աստվածածինը հանդես գալիս որպես՝

«Անձից լուծիչ և քափի մեղաց սուրբ կոյս»²⁸:

Պատկերավորության և այլաբանության հարատությամբ Ծննդյան օրերի ութ կանոնների մեջ աչքի է ընկնում ութերորդ օրվա «Լոյս ի լուսոյ» օրինության երկրորդ մասը:

Բնաւատեղծը որպեսզի ցուց տա, թե ինչպես և ի՞նչ ձևերով է Փրկիչը մարդկությանը ազատագրել մեղքերից, դիմերով Հիսուսին, գրում է հետևյալ պատկերավոր տողերը.

«Ըզքեզ որ հոգով և հրով մաքրեցեր զմարդկան աղտևողութիւն...»

Փրկիչն երևեցա զաշխարհս աղբեցոյց ի պատրանաց թշնամոյն...»

Զրով կիզու զմեղս մեր այսօր երևեալ ապ- րեցոցիցն եւ զովացուցանէ զաշխարհս աստուածա-

յին ջրովն»²⁹:

Աստվածածին և Քրիստոսի ծննդյան տողերի վերաբերյալ Մ. Խորենացու գրած շարականները բազմաթիվ են և մենք դրանք բոլորը ընկնության չենք ենթարկել՝ կրկնություններից խուսափելու համար: Կանոններում եղած Օրինություններից, Մեծացուցեներից, Տերերկնիցներից ու Հարցերից շատերը գրեթե կրկնում են իրաք՝ բովանդակության, ոճի, պատկերների և մտքի տեսակետից: Դրա համար էլ մենք ընտրել և քընության առարկա ենք դարձել դրանցից այնպիսիները, որոնք որոշ չափով ինքնուրույն են, պատկերավոր ու քնարական:

* * *

Այժմ անցնենք Տյառնընդառաջի և Վերա-

փոխանան տոների առթիվ գրված շարականներին:

Խորենացին Տյառնընդառաջի տոնին նվիրել է 7 շարական, որից երկուսը՝ Օրինություն, մեկ Հարց, երկուսը՝ Տերմերկնից, մեկ Մեծացուցեն, և մեկ Ծաշու:

Տյառնընդառաջի տոնի կանոնի շարականները նվիրված են Քրիստոսի այցին Երուսաղեմ, Սոլոմոնյան տաճարին: Տաճարում Միմեռն ծերունին, որը սպասում էր Մեսիայի Գալուտանը, իր աշքով տեսնում է Փրկչին և հայտարարում համարձակ: Նա գոհությամբ է լցված դեպի Արարիչը, և ասում է «Արդ, արձակես զծառայս քո, Տէր, խաղաղութեամբ»: Տյառնընդառաջի, ինչպես և մյուս բոլոր տերունական տոների շարականների մեջ ամենագլխավորը Օրինություններն են, իսկ մնացածները լրացնում ու խորացնում են Օրինության արտահայտած հիմնական գաղափարները:

Այս կանոնն ունի երկու Օրինություն. մեկը՝ «Մարմնացեալդ ի կուսէն», իսկ մյուսը՝ «Այսօր ի տաճարն եկիր»: Առաջին Օրինության մեջ, ըստ Ավետարանի պատում՝ մեղինակը տախի է Փրկչի Երուսաղեմ գալու խորհուրդն ու նախառակը: Դրա հետ արտահայտում է միաժամանակ նաև դավանաբանական և աստվածաբանական գաղափարներ.

«Մարմնացեալդ ի կուսէն նախայախտեան Բանըդ,

Այսօր ի տաճարն եկիր կատարեն զօրէնս՝ Վասն փրկութեան հեթանոսաց»³⁰:

Մյուս տաճ մեջ բարեքանվում է Փրկիչը՝ իր համեստության, միաժամանակ մեծության և մարդկությանը նոր կրանք պարգևելու համար.

«Որ յանարուեստ աթոռ նատիս բարեքան- եալդ ի հրետակաց,

Այսօր ի Միմեռնի բառնալով ի գիրկս, Որ ընծայեցս զմեզ ի կեանսըդ յախտենից»³¹:

Ասպա վերջին տաճ մեջ բանաւեղծը խնդրում է Փրկչից, որ Միմեռն ծերունու բարեխտությամբ արժանանան հավիտենական կամացիները, որոնք որոշ չափով ինքնուրույն են, պատկերավոր ու քնարական:

«Որ արձակիչ ես կապելոց, պարգևատու ամենեցուն,

Այսօր հայցմամբ ծերունոյն արձակեան և զիս զբազմամեղըս ի կապանաց մահու ի կեանսըդ յախտենից»³²:

²⁶ Անդ, էջ 73:

²⁷ Անդ:

²⁸ Անդ:

²⁹ Անդ, էջ 74—75;

³⁰ Անդ, էջ 94:

³¹ Անդ, էջ 94:

³² Անդ, էջ 95:

Մյուս Օրինության մեջ շոշափվում են դարձայ նոյն զաղափարները՝ տարբեր ձեռքբով։ Միևնույն Օրինության երկու տները դրանց մեջ միաժամանակ Քրիստոսը բնիւթավում է որպես լուս ու լուսավորիչ և «իմանալի արեգակ»։

«Այսօր աշխարհի ցուցեր լոյս
Եւ փրկութիւն տիեզերաց...»³³։
Այսօր իմանալի արեգակը,
Որ ծագեցար տիեզերաց...»³⁴։

Կանոնի մեջ եղած «Օրինեմք զքեզ, որ առեցար ի Հօրէ» Հարցը նոյնպես կրկնում է Քրիստոսի տաճար զարու դեպքը։ Խնչայի ձևերով որ Հարցը կրկնում է Օրինությունների արծարծած մտքերը, նոյնպես էլ գործառունը կրկնում է Հարցի շոշափած մտքերը։

«Աթոռ քրովեական» Սեծացուցեն նվիրված է Սիմեոն ծերունուն։

«Աթոռ քրովեական երևալ պաօր
Սիմեոն,
զԱստուածորդին ի գիրկու իր բարձեալ
մարմնով,
Զոր գորք երկնից ի բարձուն հանապազ
մեծացուցանեն...»³⁵։

Երկրորդ տունը դրսւորում է օրվա դեպի առիթով Սիմեոնի մեջ ստացածած ուրախ տրամադրությունը։

«Հոգովն գոչէր, ցնծայր ակեօքն ծերունի
ասելով

Սա է բագաւորն անման,
Զոր գորք երկնից ի բարձուն հանապազ
մեծացուցանեն»³⁶։

Եվ վերջապես ուրախության արցունքների աչքերին Սիմեոնը Փրկչից խնդրում է։

«Սրտասուելով աղերսէր՝
Սրճակեան զիս ի խաղաղութիւն,
Անարատ ծնողի քո բարեխօսու-
թեամբ»³⁷։

Կանոնում եղած «Որոյ առեալ հրաման» Ողորմայի մեջ շարականի հեղինակը երկնից սպասող շնորհւերը խնդրում է ստանալ Սիմեոն ծերունու աղոթքներով ու միջնորդությամբ։

«Որոյ առեալ հրաման ի սուրբ հոգուցն՝
Ոչ տեսանել զման մինչև տեսցէ զօծեալն,
Տէր, աղօթիւր ծերուն, ողորմեա»³⁸։

³³ Անդ, Էջ 96:

³⁴ Անդ, Էջ 96:

³⁵ Անդ, Էջ 98:

³⁶ Անդ:

³⁷ Անդ:

³⁸ Անդ:

Այդ նոյն ոգով է գրված նաև «Զոր վաստակնեն ի բարձուն» Տերմերկնիցը։ Այստեղ շարականի զիսավոր միտքն այն է, որ Քրիստոսը մարդկությանը փրկելու համար է մարմացել և բանի որ այդպէս է, ուստի շարականի վերջին տան մեջ բանաստեղծ ասում է։

«Վասն որոյ և մեք ընդ Սիմեոնի զոշեմ,
Որ ի Հօրէ լուսոյ լոյս ծագեցար մեզ և
կեանք,
Փառք գալստեանն քո Տէր»³⁹։

* * *

Աստվածածնի Վերափոխման տոնի միայն ստացին պատկերն է պատկանում Մ. Խորենացուն, այսինքն միայն ստացին օրվա շարականները (տոնն ունի երեք օր, կամ «պատկեր»), որոնք նետկալներն են՝ «Այսոր ժողովեալ ի սրբոց» օրինությունը, «Որ զնախամօրն զանցան» Հարցը՝ իր գործատնով, «Խորանապարկ կամարանան» Սեծացուցեն, «Որ ունի իշխանութիւն մասն և կենաց» Ողորման և «Անսկիզբն Աստուած» Տերմերկնիցը. ընդամենը՝ նինդ շարական։ Այստեղ էլ տոնի օրվա բոլոր շարականների ուղղությունն ու մոտիվները որոշող օրինությունն է։ Տիրամարը վախճանվել է, որի բաղման ու երկինքը վերափոխման հանդիսավոր դեպքի ստիթով հավաքվել են ստարչակներն ու իմաստուն կոյսերը, որոնք

«Այսօր ժողովեալ սրբոցն ի միասին,
Երանելի առաքեալքն և սուրբ կուսանքն՝
Զամազգեատուր պայծառացեալ լուցա-
նելին,

Զլապտերս իրեանց և միաձայնեալ
ասէին»։

Օրինեալ եւ՝ ամենօրհնեալդ ի կանայ»⁴⁰։

Ապա շարականագիրը նկարագրում է, որ երբ կույսի մարմինը մոտեցնում են գերեզմանի դռանը, բոլոր ներկաները նուզմունը սպասում են Փրկչին։

«Այսօր դնելով սուրբ կոյսն առ դրանն զի-
րեզմանին,

Սպասէին և ակն ունէին Տեանն, իսկ ինք-
նին զորով,

Գեր ի վերոյ տեսեալ զԱրարիցն եկեալ
բազում նրեշտակօր,

Եւ նոցա միաձայնեալ ասէին՝
Օրինեալ եւ՝ ամենօրհնեալդ ի կանայ»⁴¹։

Սակայն, ըստ շարականի Մարիամ Աստ-

³⁹ Անդ, Էջ 99:

⁴⁰ Անդ, Էջ 617—618;

⁴¹ Անդ, Էջ 618;

վածածնի թաղումը երկրում չի կայանում: Երկնարնակները Քրիստոսի հետ իշնում են երկիրը, հավաքվում Տիրամոր մարմնի շոր-շը, երգում պատշաճ երգեր ու փառարանում, ապա թիզ հետո տեղի է ունենում հրաշքը.

«Այսօր տեսեալ զուրբ կոյսըն թողոցեալ
յօդս,
Եւ ամպեղէն կառօքն ի վեր համբարձեալ
յերկինս,
Մտանելով յերկնային խորանսն ընդ
ինսատուն կուսանսն,
Եւ նոցա միաձայնեալ ասէին՝
Օրինեալ եւ՝ ամենօրինեալդ ի կանապս»⁴²:

Երկնային համփերով, ամպերի վրայով թոշելով, հրեշտակների բազմաթիվ հրեղեն խոմը Տիրամոր մարմինը հասցեում է երկնի ամենավերին շերտերը.

«Յօթնատեղեան խորանսն»⁴³:

Հարցի առաջին տունը հատկացված է Սատվածածնին, որն իր երկունքով ու ծննդյամբ լուծել է հախամոր (Եվայի) կատարած հանցանքը: Ահա այս հպատակով էլ մարդացել է Փրկիչը.

«Որ գնախամօրն զյանցան երկանցն
երաք,
Եւ զորդիդ քո միածին մարմեով ծնա...»⁴⁴:

Ահա դրա համար էլ հատկապես մեծարվում է կույսը, այդպես և նրա մարմինը տեղափոխում են երկինքը.

«Այսօր առ ի մեջ ի վերին զօրսն փոխե-
ցեր,
Զնախատեղծին ծնունդն, զոր միշտ ու-
նիմք բարեխօսու...»⁴⁵:

Հարցի երկրորդ տունը վերաբերում է Հի-
սուսին.

«Որ Էսլիցդ ես Հօր և սուրբ հոգուն,
Մարմնանալ ի յանձն ստեր ի սրբոյ կու-
սն,

Այսօր փոխադրեալ դասեցեր յերկնային
խորանսն
Զրոյին ծնողն, զոր միշտ ունիմք բարե-
խօս...»⁴⁶:

Վերջին տունը նվիրված է ս. Հոգուն.
«Որ յամենապնի ես լցուցիչ, բարեխնամ
սուրբ հոգի,
Այսօր պարգևոր հանգուցեր յանատում
ի կեանս՝

Զիտութեանց մայրն, զոր միշտ ունիմք
բարեխօս...»⁴⁷:

Հարցի գործատան մեջ էլ, ինչպես բոլոր
Հարցերում, չի շոշափվում Բարելոնի «Երից
մանկանց» խնդիրը: Ամբողջ գործատունը
նույնպես վերաբերում է Տիրամոր վերա-
փոխմանը և փառարանությանը.

«Բարձր արարէք զօնող... բանին միշտ
կոյսն...»

Զքարեբանեալդ անդադար միշտ ի վերին
զորաց...

Զվերափոխեալդ ի դասս առաքելոց և
մարգարէից...»⁴⁸:

Կանոնի «Խորանայարկ կամարանման» Մեծացուցեի մեջ արդեն մեծարվում է Տի-
րամայրը:

«Որ ունի իշխանութիւն» Ողորմայի մեջ
բանատեղծը ակնարկում է Քրիստոսի հա-
րությունը և Տիրամորը.

«Տօնելով զիշտակ կուսի Աստուծորդ-
տոյ մօր,

Հրանուին հրեշտակը ի յերկինս և ցնծան,
Դասք առաքելոց և մարգարէից ընդ կու-
սական տօնս»:

Կանոնի վերջին շարականը «Անվկիզբն
Աստուծ» Տերեւերկնիցն է, որը մի հատուկ
փառարանություն է՝ ձնված ամենասուրբ
Երրորդությանը:

Հընկնեն կառերով Տիրամոր մարմինը
տեղափոխվում է մարդկացին բնույթան հա-
մար անհասանելի երկինքը: Այսուել Տիրա-
մայրը որակվում է «մարգարտատեսիլ»,
«Ծիրանազգեստ», «հրաշափառագլու», «հա-
մատարած լոյս» և այլ նակդիրներով:

Մ. Խորենացոյ գրած մի քանի տասնյակ
տարբեր բնույթի շարականները իրենց Էու-
թյամբ ու արվեստով բնորոշ են նրանով, որ
սրանց մեծ մասի հոյութ վերցված է Նոր
Կուտարանից, որի պարզ դրվագներն այս-
տեղ վերածվել են նոյնպես պարզ հոգևոր
երգերի: Միևնույն կանոնի գրեթե բոլոր շա-
րականներում գլխավոր գաղափարը հաճախ
է կրկնվում տարբեր խոսքերով, որը որոշ
շափով թուլացնում է դրանց արվեստը,
Տյառնընտառաջի և Վերափոխման կանոն-
ները հանգիստ, զուսպ նկարագիր ունեն,
իսկ Ավետյաց և Ծննդյան կանոնները հա-
մակված են չերմ, վարակող զգացմունքնե-
րով ու խորը քնարականությամբ: Խորենա-
ցոյ շարականների արժեքն ու տեղը շատ
բարձր են մեր հոգևոր երգերի մեջ: Այդ
քնարական ու չերմ շնչով գրված երգերը
մեր հոգևոր քնարերգության գոհարներն են:

⁴² Անդ, Էջ 618:

⁴³ Անդ, Էջ 618:


⁴⁴ Անդ, Էջ 620:

⁴⁵ Անդ:

⁴⁶ Անդ:

⁴⁷ Անդ, Էջ 621:

⁴⁸ Անդ:



ՀԱՅ ՇԱՐՏԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՁ ԵՎ ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ՄՇԱԿԸ

Լրացավ ճարտարապեսության դրկտոր, պրոֆ. Վարագդատ Մարտիրոսի Հարությունյանը ծննդյան 60-ամյակը:

Նա ծննդել է Կան քաղաքում բազմանդամ ընտանիքում: Հայի դառը Հակատագիրը բաժին ընթառ նաև ապա ընտանիքին. 1915 թվականին, երբ Վարագդատը 5 կամ 6 տարեկան էր, բազում հայ ընտանիքների նետ նա բռնեց զարթի ճամապարհը:

Բնահան եղած շատերի նետ նրանք ապատան գտան Թիֆլիսում: Այստեղ ընտանիքը կորցրեց հորը: Ընտանիքի հոգար ընկալ մոր ուսերին: Մեծ տառապանքով նա խնամեց իր երկու զավակներին՝ Արծրունուն և Սիրանուշին, իսկ որքանոցի սառը պատերն իրենց մեջ առան մանոկ Վարագդատին:

Ծանր պայմաններում է անցել Վ. Հարությունյանի մանկությունը, որից միայն տխոր հիշողություններ են մնացել նրա արտում: Մի գոտոր հացի հոգար նրան գցել է փողոցները, որը մանոկ Վարագդատը չուր էր ծախում, կոշիկ մաքրում...

Այնուամենապեսիվ, 1927 թվականին գերազանց գնահատականներով ավարտելով միջնակարգ դպրոցը, Վ. Հարությունյանը սկսում է իր աշխատանքային գործունեությունը որպես տարրական դպրոցի ուսուցիչ Թումանյանի շրջանի Ծնող և Արձիս գյուղերում:

Ընդամենը 17 տարեկան էր, երբ գյուղ եկավ ու իրեն նվիրեց Լոռիա ազգաբնակչության շրջանում անգրագիտության վերացման, զյուղերի կրթական, լուսավորական զարգացման գործին վայելելով գյուղացիների սերն ու համակրանքը:

Առին իր շրջաղ բնությամբ մի ներխարային աշխարհ բացեց նրա առաջ: Ամենուրեք ափոված անհամար հոյակապ հուշարձանները գերեցին նրան, սեր Երարկիցից: Իսկ ժողովրդի հոգեոր մշակույթի գանձերի հանդեպ: Եվ այդ սեր նրան 1931 թվականին տարավ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապեսության բաժինը, որտեղ ուսումնառության վեց տարիները եղան գիտության ծարավը հագեցնելու, ճարտարապեսական արդիստի գաղտնիքները ճանաչելու և մասնագիտանալու տքնաշան մի ժամանակաշրջան:

Ծնորնիվ ցուցաբերած ընդունակությունների, Վ. Հարությունյանը ավարտելուց նետու թողնվում է ճարտարապեսության ամբիոնում որպես ասիստեն: Այդ աշխատանքը նա 1938—1939 թվականներին նաշողությամբ գործակցում է Հիմնարարական ֆակուլտետի դմբանի պարտականությունների կատարման նետ: Այօրյա ապա ճանարկենվածությունը շիանգարեց նրա մասնագիտական պատրաստականության բարձրացնելու համար:

րացման ուղղությամբ մշտապես տարվող անդրկ աշխատանքին: 1939—1941 թվականներին, առանց աշխատանքից կտրվելու, Վ. Հարությունյանը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի պատմության ինստիտուտի ասպիրանտ էր, որտեղ ուսանում էր և մասնակցում Դվինի պեղուններին: Հայրենական պատերազմից հետո վերադառնապով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, նա կրկին լծվեց գիտա-մանելավարժական աշխատանքի:

Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանների չափագրություններն ու ուսումնասիրությունները, նրանց վերաբերյալ տեսական աշխատությունների յուրացումը և մերլուծությունը դարձան նրա տարելքն ու կյանքի իմաստը:

Հկտրվելով պոլիտեխնիկական ինստիտուտում ճարտարապետական նոր սերունդ դաստիարակելու շնորհակալ գործից, նա հետագա տարիներին զուգահեռաբար աշխատեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովորի ճարտարապետության գործերի վարչության պետի տեղակալի, նոյն վարչության ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեի նախագահի, Հայկական ՍՍՀ ԳԱ արվեստի պատմության և տեսության սեկտորի վարիչի պաշտոններում: Նրա անմիջական դեկանալարությամբ մարացվել և վերանորոգվել են տասնյակ հուշարձաններ (Օգոնին և Արուճի տաճարները, Հայոցնի, Սանահին, Հաղպատի, Տեղերի և Կեչառիկի վանքերը, Նորավանքի և Աստվածածին եկեղեցին և շատ ուրիշ հուշարձաններ), պեղվել է Արուճի պալատը, հրատարակվել են համբամատչելի գրքեր մեր պատմա-ճարտարապետական հուշարձանների մասին:

1947 թվականից նրան վատահիվեց պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետության ամբիոնի վարիչի պաշտոնը, որն արդեն շուրջ քսորդ դար վարում է՝ երիտասարդական ավլունով և քաղմավատակ մանկավարժի հմտությամբ:

Պրոֆ. Վ. Հարությունյանի երկարամյա զիտա-հետազոտական աշխատանքը նվիրված է հայ ճարտարապետության պատմության և տեսության ամենատարբեր հրացերին, որոնց վերաբերյալ հրապարակվել են շուրջ 100 գիտական աշխատություններ, այդ թվում յոթ մենագրություն:

Նրա ուսումնասիրությունների շնորհիվ գիտական ճանաչման արժանացան վաղ միջնադարի պալատական շենքերը՝ Դվինում, Արուճում և Զվարթնոցում, ծաղկուն միջնադարի վանքային համալիրների աշխարհիկ շենքերը (գրատերը, սեղանա-



տները և այլն), քարավանատներն ու կամուրջները:

1946 թվականին Վ. Հարությունյանին, «Դվին 5—7-րդ դդ. ճարտարապետական հուշարձանները» աշխատության համար, շնորհվեց ճարտարապետական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Նրա երկարատև ու տքնածան աշխատանքի արդյունքն է «Հին և միջնադարան Հայաստանի քաղաքաշինությունը» բարձրածեր ու ստվարածալ աշխատությունը, որի համար հեղինակին 1964 թվականին շնորհվեց ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան:

Պրոֆ. Վ. Հարությունյանը 15 տարի շարունակ իր սրբազն աշակեցությունն է քերում նաև, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Մայր Աթոռին առընթեր կազմված ճարտարապետական-շինարարական համանաժողովի աշխատանքներին՝ որպես անդամ և քարտուղար:


Մեծ և քաղմակողմանի են նաև պրոֆ. Վ. Հարությունյանի հասարակական ակտիվ գործունեության շրջանակները: Ակաած 1949 թվականից նա անընդմեջ ընտրվել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության անդամ, քարտուղար և նախագահի տեղակալ, իսկ 1962 թվականից մինչև


այժմ չորս անգամ ընտրվել է Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ: Դրա հետ մրասին ևս խանդավագործն մասնակցում է Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության աշխատանքներին: Նա անդամ է նաև ՍՍՀՄ ճարտարապետների միության վարչության և քարտուղարության, Երևանի քաղաքային առվետի դեպուտատ է, Սփյուռքանդության հետ մշակութային կապի կոմիտեի հանրապետական վարչության և նրա նախագահության անդամ: Անդամ է նաև Հայկական հանրագիտարանի գլխավոր խնդիրագրության և շատ գիտական խորհուրդների, այդ թվում՝ Հուշարձանների պահպանության համամիութենական գիտա-մեթոդական խորհրդի:

Պրոֆ. Վ. Հարությունյանը երկու անգամ արժանացել է «Պատվի նշան» շքանշանի, մեջազների, Հայկական ՍՍՀ Գերագոյն սպառադաշտի և ՍՍՀՄ ճարտարապետների միության պատվորքերի: Նրան շնորհված է Հայկական ՍՍՀ արթավոր վաստակավոր գործի պատվավոր կոչում:

Պրոֆ. Վ. Հարությունյանը արդեն 60 տարեկան է, սակայն տակալին կայստան է և եռամբուն, հաջոտացած մեծ կենսափորձությունով ու վաստակով՝ շարունակված շատ տարիներ ևս իր արդյունավետ գործունեություններում իրեն հասուն խանդավագործ է և հայկական ճարտարապետության գործադրության:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ





Հ. Եղիսաբերձուն

ԴՍԵՂԻ ԲԱՐՁՐԱԳԱԾ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԵՎ ՔԱՌԱՄՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ՄՅՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՎԻՄԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դսեղ զյուղը գտնվում է նախկին Ալավերդի շրջանում, որի այժմ կոչվում է Թումանյանի շրջան (պատմական Հայաստանի Գուգարք համանգի Տաշիր կամ Լոռի գավառում):

Գյուղը տեղափորված է՝ հարավից հյուսիս ձգվող սուրաններուն-եռանկյունուն ձև ունեցող մի ընդարձակ սարահարթի վրա՝ սուր անկյունով ուղղվելով դեպի հյուսիս. Հարա արեւելյան և արևմտյան կողերը համապատասխանաբար եզերվում են Սաղո-ձորի կամ Զաղի-ձորի և Դեբեղա-ձորի անդամանոր ձորերով, իսկ հարավային կողմից հարակցվում է ընդհանոր լեռնաշղթային, «մեջքը հենած լեռներին», որը բարձրանում է ս. Սարգիս լեռնագագաթը:

Ծանապարհը՝ Երևան-Թրիլիսի երկարությունը Քոլագիրան (այժմ Թումանյան) կայարանից Դեբեղա-ձորի աջ ձորալանջով ոլորապտույտ բարձրանալով, տանում է դեպի զյուղը, որը երեք կիլոմետրաշահ հեռու է հիշյալ կայարանից:

Հնում այդ ճանապարհը լեռնային սովորական մի կածան էր, որը մարդիկ երթեւ-

կում էին հետիւտն կամ գրաստներով. իսկ այժմ նա լայն ու բարեկարգ խճուղի է, որով երթեւկում են ամեն տեսակի ավտոմեքենաներ:

Գյուղի սահմաններում պահպանված հյույական մշակույթի հարուստ և արժեքավոր մնացորդները վկայում են այն մասին, որ Դսեղը Հայաստանի ամենահնագույն և նշանավոր բնակավայրերից մեկն է եղել:


Պահպանված հյութական մշակույթի այդ մնացորդների մեջ առավել ուշադրության արժանի և նշանակալից է Բարձրաքաջ ս. Գրիգորի վանքի հուշարձանների խումբը, որը գտնվում է գյուղից մոտավորապես երեք կիլոմետր դեպի հյուսիս-արևելք, Զաղի-ձորի կամ Սաղո-ձորի անտաճապատ ձախ ձորալանջի մի փոքրիկ հարթակի վրա (նկ. 1):

Պատմական աղբյուրները ոչ մի հիշատակություն չեն պարունակում երբեմնի այդ նշանավոր մենաստանի մասին: Նրա անցյալ պատմության մասին որոշ չափով հյութ կարող են ծառայել վանքի վրա փորագրված բազում արձանագրությունները, որը նշված

են առանձին նուշարձանների կառուցման ժամանակն ու կառուցողները, վանքին տըրպած բազմաթիվ կալվածներ ու այլ նմերներ, որոնք բնորոշում են նրա նյութա-տնտեսական հզորության աստիճանը:

Բացի վիմագիր արձանագրություններից, բարձրաբաշ և Գրիգորի վանքի անցյալ

Այդ եկեղեցու շենքը ամբողջովին չի պահպանվել. նետագայում նրա որոշ մասերը քանդվել են: Խոկ ավելի ուշ՝ անցյալ դարի սկզբներին տեղացից վերականգնում են եկեղեցու բանդված մասերը, որոց չափով ձեռվախտում այն և դարձնում օգտագործելի եկեղեցի:



Նկար 1. Բարձրաբաշ և Գրիգորի վանք.—Վանքի նուշարձանների միմնական խմբի բնդիմանուր նատակագիծը

պատմությանը նետաքրքիր նյութ կարող են ծառապել նաև տեղում պահպանված նյութական մշակույթի նարուատ մնացորդները: Այդ մնացորդների ուշադիր և մանրազնին ուսումնասիրությունը բերում է այն նաստատ համզման, ըստ որի Մամիկոնյան նախարարության մի ճյուղն է, դորս գալով իրենց բուն հայուններից, Տարոնից, գալիս է Գոգար՝ Տաշիր գալաքը և բնակություն նաստատում Դսեղ գյուղում:

Գյուղում պահպանվել է մի կիսավեր եկեղեցի, որի կառուցողական և մշակման ձևերը անվիճելիորեն վերաբերում են է դարին: Այդ եկեղեցու արևելյան պատի ճակատամասում քանդակված է Մամիկոնյան իշխանների տոհմանիշը՝ երկգլխանի արծիվը՝ գտող ճանելերում բռնած: Այդ փասողը ինքնին վկայում է, որ նշված եկեղեցին կառուցված պետք է լինի Մամիկոնյան իշխանների կողմից: Խոկ դրամից էլ նևուում է, որ վերջիններս այսուղ բնակություն նաստատած պիտի լինեն է դարում:

Մամիկոնյանները, այդ եկեղեցու կառուցումից բավական ժամանակ հետո, նախարար Ժ—ԺԱ. դարերում, ինչպես այդ կրտսենքները հետո, հիմնում են Բարձրաբաշ և Գրիգորի վանքը: Խոկ դրամից էլ բավական ժամանակ ուշ, ԺԳ. դարի առաջին կիսում, ավելի են ընդարձակում այն, կառուցելով նոյնապ եկեղեցի և չընալագել գալիք, դարձնելով վանքը իրենց տոհմանական գերեզմանատեղին: Միաժամանակ վանքը նարըստացնում են բազմաթիվ ու բազմապիսի կալվածներով և այլ կարգի նվերներով, որոնց մասին նշվում է վանքի վրա փորագրված արձանագրություններում և որոնք մեջ են բերված վերջում:

Բարձրաբաշ և Գրիգորի վանքը, ինչպես այդ պարզ նկատվում է նրա կառուցվածքների կանգուն մնացած մասերից և տեղում թափված-բանդված մասերը բեկրներից, նանդիսացել է հայ արվեստի ու ճարտարապետության նոյալիս կրթողներից մեկը:

Բացի տեղում պահպանված այդ մնացորդներից, վանքի կառուցվածքների մասին

պահպանվել է մի ավանդություն, որի համաձայն նրա եկեղեցին այնքան բարձր է նոր, որ նրա գմբեթի վերևի ծայրի մաստալյա փայլուն խնձորակը, որի վրա ստվորաբար ամրացված է լինում խաչը, տեսանելի է եղել սարահարթի վրայից, որ տեղափոխված է գլուխը: Այդ ավանդությունը նույն վկայությունն է այն բանի, որ Բարձրաքաջ և Գրիգորի վանքի կառուցվածքները իրոք եղել են բարձր ու հոյակապ:

Սի որիշ ավանդությամ համաձայն, վանքի միաբանության անդամների թիվը այնքան մեծ է եղել, որ երբեմն անհետ կրոած միաբանության անդամները մնացել են անցյատ: Այդպես օրինակ, մենք անգամ, զարգան ամիսներին, դարմանի միջից հայտնարկվում է մի աքեղայի դիակ, որը դարմանց է ընկել նախորդ տարվա կալոցից հետո այդուղի դարման լցնելու ժամանակ ու դարմանի տակ մնալով խեղպէկ: Այդ ավանդության մեջ շեշտվում է վանքի մեծության հանգամանքը:

Բարձրաքաջ և Գրիգորի վանքի մեծության մասին են վկայում նաև նրան նվեր տրված բազմաթիվ ու բազմապիսի կալվածներն ու այլ նյութա-տնտեսական միջոցները, որոնք թվարկված են վանքի վրա փորագրված արձանագրությունների մեջ, ինչպես վանքի նուչարձաններին կից պահպանված ձիթհանի և միաբանության բնակիչի՝ մեծ թիվ կազմող շենքերը, ընդարձակ գերեզմանատեր և այլ կառուցվածքներ:

Բացի վերը հշվածից, վանքի վրա փորագրված մի արձանագրության համաձայն (արձանագրություն Ի. Հ.), Գոլկախ որդի Քուրդ իշխանը, որը մինչ այդ Սանահնի վանքին էր միաբանել ու այն ընտրել իրեն գերեզմանատեղի, 1246 թվականին դուրս է գալիս Սանահնի վանքի միաբանությունից ու իր գերեզմանատեղից և միաբանելով Բարձրաքաջ և Գրիգորի վանքին, վերջինս է ընտրում իրեն հանգստատեղի:

Այդ վերջին հանգստանքը վկայություն է այն բանի, որ Բարձրաքաջ և Գրիգորի վանքը հշված ժամանակամիջոցին իր հոգևոր ու նյութական կացությամբ համազոր էր Սանահնի վանքին, որն այդ ժամանակ դավում էր Հայաստանի գլխավոր վանքերի շարքը, ինչպես այդ մասին տեղեկացնում է պատմիչ Կիրակոս Գանձակեցին, «եւ գլխաւոր վանուագըն՝ Սանահնի և Գետիկ և Հաղածին...»¹:

Վանքի վրա փորագրված արձանագրություններից երևում է, որ նրան են միաբանության վատություն, Վենետիկ, 1865, էջ 174:

տներ և նրանց առաջատար դիրք գրավող անդամներ, ինչպիսին Պոռչյան իշխանների տոհնն է ու նրա յեկավար անձինք (արձանագրություն Ժ. Ե.) և որիշներ, որոնք իրենց նվիրաբերություններով մեծապես նպաստել են վանքի զարգացման ու բարգավաճմանը: Վերը շարադրվածից միանձաւայն ակներ է դատնում, որ Բարձրաքաջ և Գրիգորի վանքը, որքանով դասկում էր նայ արվեստի և ճարտարապետության հոյակապ կոթողներից շարքը, նույն չափով էլ նա հանրավում էր Հայաստանի հշանավոր հոգևոր կենտրոններից մեկը:

Թե երբ են ավերվել վանքի այնքան գեղեցիկ ու հետաքրքիր կառուցվածքները և երբ է դադարել նա որպես մենաստան գոյություն ունենալուց, ստուգ հայտնի չէ: Նրա վրա փորագրված արձանագրությունները ԺԴ դարից այն կողմ չեն անցնում: Ելենով դրանից և դատելով վանքի փլատակների ընդհանոր դրվագքից, կարելի է ենթադրել, որ նա ավերված ու ամպացած լինի մոնղոլական արշավանքների ժամանակ՝ ԺԴ—ԺԵ դարերում: Առավել հավանական է, որ վանքը ավերված լինի ԺԴ դարում: Այդ ենթադրության համար հիմք է ծառացում Դանել գյուղից դեպի Մարց գյուղը տանը ճանապարհի եզրին 1285 թվականին կանգնեցրած խաչքարի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը:

«Ի թոին ՁԼԴ (1285). կանգնեցաւ խաչս ի Անդ և ի դառն ժամանակս թաթարաց, ի թագաւորութեան Դեմետրի՝ որդոյ Դաւթի, ի հայրապետութեան տեառն Յոհաննիսի, ես՝ Թովմայ քահանայ և եղբայր իմ Տիրացու կանգնեցաք զիահս ամենափրկիչ՝ լիշտակ հար մերոյ Գրիգորի քահանային և մար մերոյ Թիրանուշային և քուեց մերոց՝ Տիրամարին և Տիրոցին և փեսայից մերոց անպատճառ քահանայից՝ Խաչատուրին և Մարգարին: Ու աստուածաերք՝ որք երկրպագեք՝ զիահգուցեալս յիշեցեք ի Քրիստոս»:

Սովորական իշխանության տարիներին նկատելի աշխատանքներ են կատարվել վանքի հողարձանների մաքրման ու բարեկարգման ուղղությամբ, որի ընթացքում մաքրված է հուշարձանների ներսն ու շըրջապատը շինարարական աղբերից ու բուսած ծառերից, առանձնացված ու դասավորված են հալտնաբերված բեկորները և այն:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ


Ա. Աստվածածնի անվան փոքրիկ եկեղեցի.—Գտնվում է հուշարձանների խմբի հյուսիսային կողմում: Ավերակ վիճակում է՝

¹ Կիրակոս վարդապետի Գանձակեցի. —Համառոտ պատմություն, Վենետիկ, 1865, էջ 174:

պահպանվել են միայն պատերը՝ մոտ 4 մետր բարձրությամբ։ Վանքի ամենահին կառուցվածքն է։ Նրա կառուցման ճիշտ ժամանակը հայտնի չէ, իր կառուցղական ու մշակման ձևերով բնորոշ է Ժ—ԺԱ դարերն։ Անկասկած, այն կառուցված պետք է լինի Մամիկոնյան իշխանների կողմից (Յն. 2):

միացությամբ։ Հետագայում, նավանարար ԺԳ դարում, ներարկվել է վերանորոգման, ո:ր, բացի նոյն կապտագոյն բազալտի կիսառաջ բարերից, օգտագործվել է նաև մարդագոյն տուփի կիսառաջ բարեր, իսկ ներսից ավաղած է եղել կրաշաղախով։

Ս. Աստվածածնի անվան մեծ եկեղեցի։ Կտնվում է նախորդ եկեղեցու նարակային։



Նկար 2. Բարձրաբաշ ս. Գրիգոր վանք.—Աստվածածնի անվան երկու եկեղեցիները արևելքից

Եկեղեցին ոչ այնքան մեծ, միանալ բազիկ ձևով կառուցված մի շենք է, որն արևելյան կողմից ունի բավականին խորը, կիսակրոր արսիդ։ Վերջինիս երկու կողքերին կամ մեծական փոքր խորաններ, որոնց մոտքերը բացվում են արսիդի մեջ՝ իրար դիմաց։

Հարավային և հյուսիսային պատերին կից, ներսից ձգվում են մի-մի որմնապոտն, որոնք միանալիս են եղել թաղակապ ծածկը գոտիկող կամարով։

Երկու մոտքերից մեկը բացվում է արևմտյան, իսկ մյուսը՝ հարավային կողմից՝ կիսալլոր ճակատակապ մեծ բարերով։ Արևմտյան մոտքից վերև բացվում է մի կոր լուսանցք, մի փոքր լուսամուտ էլ բացվում է արևելյան պատից՝ արսիդի մեջ։

Եկեղեցու կանգուն մնացած պատերի շարվածքի ձևը ցույց է տալիս, որ շենքը կառուցված է եղել կապտագոյն բազալտի մաքրոր տաշված բարերով, կրաշաղախի

